

Երեմն մենք այս ու այն բանն ենք ձեռնարկում, մեկնում ենք ու վերադառնում, կատարում մեկ այս, մեկ այն, և ամեն ինչ բնական ու հեշտ է թվում, ոչնչով չծանրաբեռնված ու կարծես թե ոչ պարտադիր, սակայն, ամեն ինչ, ըստ երևույթին, կարող էր և այլ կերպ լինել: Երեմն էլ, որիշ պահերի, թվում է, թե ոչինչ այլ կերպ չէր կարող լինել, անպարտադիր ու հեշտությամբ տրվող ոչինչ գոյություն չունի, և նույնիսկ մեր յուրաքանչյուր ներշնչում-արտաշնչում նախասահմանված է ի վերուստ և ծանրաբեռնված ճակատագրով:

Մեր կյանքի այն արարքները, որ մենք բարի ենք համարում, և որոնց մասին թեթև սրտով ու հաճույքով ենք պատմում, դրանք բոլորն ել վերաբերում են այն առաջին՝ «հեջու» համարվող տեսակին, և մենք հեշտությամբ էլ բոլորը մոռանում ենք: Որիշ արարքները, որոնց մասին դժվարանում ենք խոսել, մենք երեք չենք կարողանում մոռանալ, դրանք ինչ-որ չափով ավելի շատ են մերը, քան առաջինները, և նրանց երկար ու ձիգ ստվերնը փոփով են մեր կյանքի բոլոր մնացյալ օրերի վրա:

Մեր հայրենական տունը, որ ընդարձակ փողոցի եզրին տեղադրված մեծ ու լուսավոր մի կառույց էր, մտնում էր բարձր շքամուտքի միջով, և անմիջապես դեմքիդ էր զարնվում օդի պաղ հոսանքը, մթնշաղն ու խոնավ քարերի շնչառությունը: Դիմացդ մեղմորեն բացվում էր բարձրաձիգ ու խավարչտին նախասրահը, կարմիր մանրավագից հունցված թիչ կորնթարդ սալաքարե հատակը առաջնորդում էր դեպի սանդուղքը, որի սկզբնափորությունը հազիկ նշմարվում էր կիսախավարի մեջ: Հազարավոր անգամներ են ներսուրուր եմ արել այդ բարձր շքամուտքից և երեք ուշադրություն չեմ դարձել ոչ նրան, ոչ էլ նախասենյակին, սալահատակին ու սանդուղքին, բայց միշտ էլ այն յուրահատուկ գգացումն եմ ունեցել, որ մուտք եմ գործում բոլորովին մեկ ուրիշ աշխարհ՝ «մեր» աշխարհը: Մթամած ու բարձրութե՛ նախասենյակից կավաքարի բույր էր փշում, նրա խորքում վեր խոյացող սանդուղքը մութ սառնության միջով առաջնորդում էր դեպի լույսն ու լուսավոր հարմարավետությունը: Բայց միշտ էլ սկզբում պարտադիր կերպով պետք է անցնեիր նախասենյակի ու թավ մթնշաղի միջով, ուր ինչ-որ բան կար հորիցս՝ արժանապատվություն և իշխանություն, ինչ-որ բա՞՝ պաժժի ու խղճմտանքի մասին հիշեցնող: Հազարավոր անգամներ դու ծիծղուն ու կայտառ անցել ես այդտեղով: Սակայն երեմն էլ մնտում էր այդտեղ և ճնշվածության, փոքրության ու վախի գգացումն էր համակում թեզ, և հապշտապ նետվում էր դեպի փոկարար սանդուղքը:

Մի օր, երբ ես տասնմեկ տարեկան էի, սովորականի պես դպրոցից տուն էի վերադառնում: Դա այն օրերից էր, երբ ճակատագրիը դարան-

կալ հսկում էր թեզ ամեն անկյունում, երբ ամեն րոպե ինչ-որ բան կարող էր թեզ հետ տեղի ունենալ: Այդպիսի օրերին, թվում է, թե սեփական հոգուր յուրաքանչյուր անկարգությունն ու խաթարումը արտապատկերվում է քո շրջապատում և աղավաղում այս: Տիաճության գգացումն ու վախի ճնշում են հոգիդ, և դու թեզանից դուրս թվացյալ պատճառներ ես փնտրում ու գտնում, աշխարհի անկատադիր է պատկերանում և ամեն քայլափոխի ընդհարվում ես խոչընդունեիր հետ:

Այդպես էր նաև այն օրը: Լույսը բացվելուն պես ինձ մի գգացում էր ճնշում (ինչ իմանաս թե ինչու, գուցե գիշերվա երազների պատճառով), խղճի խայթոցի պես մի բան, թեև ես ոչ մի անթույլատրելի արարք չէի կատարել: Առավոտյան կողմ հորս դեմքը տանջված ու հանդիմանող արտահայտություն ուներ, նախաճաշին մատուցված կաթը գոլ էր ու տիհած: Ճիշտն ասած, դպրոցում ես ոչ մի անախործ գգացումի առիթ չունեցա, բայց այնտեղ էլ ամեն ինչ անմիջարա, մեռյալ ու վիհանեցուցիչ էր թվում, այդ ամենը հանկարծ միավորվեցին ինձ արդեն բացաձանոթ անզորության ու տարակուսանքի գգացումի մեջ, որն ուսուցանում է, թե ժամանակը անսպաս է, և որ մենք՝ փորբիկ ու անզոր, հավերժապես, երկար ու ձիգ տարիներ մնալու ենք այդ տիմար ու ատելի դպրոցի ճնշման տակ, և որ ողջ կյանքն էլ անիմաստ է ու ատելի:

Այդ օրը ես զայրացա այն ժամանակվա իմ մի դասընկերոջ վրա: Վերջին ժամանակներու ես ընկերություն էի անում Օսկար Վեբերի հետ, նրա հայրը մերենակար էր: Ինքս էլ չգիտեի, թե ինչն էր ինձ նրա կողմը գրավում: Բոլորովին վերջերս նա պարծենում էր, թե իր հայրը օրական յոր մարկ է վաստակում, իսկ ես նրան մի տեսակ հեգնախառն տոնով ասացի, որ իմ հայրը տասնչորսն է վաստակում: Զփորձելով անգամ ինձ առակել՝ նա իսկույնեթ հավատաց ասածիս, և նույնիսկ շրաբնված ակնածանքով լցվեց իմ նկատմամբ, և հենց դրանից էլ ամեն ինչ սկսվեց: Չատ չանցած, ես և վեբերը մի միություն հիմնեցինք, փոխադարձ համաձայնության գալով ստեղծեցինք մի ընդհանուր դրամարկելի հավաքվելիք գումարով հետագայում ատրճանակ գնելու նպատակով: Ատրճանակը ցուցադրված էր երկարթեղենի խանութի ցուցագիտելում, դա մի կապտավուն ու պողպատակուու երկփողանի հրազեն էր: Վեբերն իմ առաջ հաշվեց, որ եթե ահա այսքան ու այսքան դրամ տնտեսենք, ապա շատ շուտով կկարողանանք ատրճանակը ձեռք բերել: Ձեռքներս երեմն դրամ էր ընկում, առօրյա ծախսերի համար նա հաճախակի տաս փթեննին էր ստանում, երեմն էլ պատահում էր, որ հենց ուղղակի փողոցում դրամ էր գտնում, կամ էլ արժեքավոր իրեր, օրինակ՝ պայտ, պղնձի կտորտանք և նման այլ բաներ, որոնք, ինչու չե, կարող էր նաև վաճառել: Նա անմիջապես միանվագ մի տասնուոց գցեց մեր դրամարկող, մի բան, որ ինձ վստահություն ներշնչեց, և մեր նպատակադրումն իրականացում ինձ համար դարձավ իրագործելի ու բազմախոսուու:

Երբ այդ օրը մտա մեր տան նախասրահը, և գերեզմանի պես սառն օդը ինձ հիշեցրեց աշխարհիս երեսին գոյություն ունեցող հազարավոր տիհած

ու զարդելի բաների մասին, այդ պահին իմ մտքերը պտտվում էին Օսկար Վեբերի շուրջը: Ես զգացի, որ չեմ սիրում նրան, թեև լվացարարութու հիշեցնող նրա բարեխիո դեմքը իմ մեջ համակրանք էր առաջացնում: Ինձ գրավում էին ոչ թե նրա անձնական հատկությունները, այլ բոլորովին մի ուրիշ բան, ես կասեի նրա դիրքը, կեցվածքը, որ նրան առանձնացնում էր իրեն տարեկից և հասարակական նույն խավից սերող տղաների խմբից. Նրա անընազբու ապրելաձնը, անտարբերությունը վտանգի ու վիրավորանք-ների հանդեպ, մոտիկից ծանոթությունը կյանքի գործնական մանրութների՝ դրամի, խանութների ու արհեստանոցների, ապրանքների ու գների, խոհանոցի, սպիտակենանի լվացման և նման այլ բաների հետ: Վեբերի պես տղաները, որոնք կարծու ցավ չեն զգում դպրոցի կոփվ-քաշքառվուներից, և որոնք ազգակցական կապերի մեջ էին կամ բարեկամություն էին անում սպասավորների, կառապանների ու գործարանային աղջկների հետ, ահա այդպիսիք աշխարհում մենք ուրիշ, ավելի հաստատուն տեղ ու դիրք էին գրադարձնում, քան ես: Նրանք կարծու ավելի հասակավոր լինեին, գիտեին, թե օրական որքան դրամ էին վաստակում իրենց հայրերը, և անկասկած ուրիշ շատ ու շատ բաներ էլ գիտեին, որոնց մասին ես խիսի գաղափար էլ չունեի: Նրանք ծիծաղում ու քրջում էին ինձ համար անհասկանալի սրախոսությունների ու կատակեների առիթով: Ես անկարող էի ծիծաղել այնպես, ինչպես նրանք էին ծիծաղում, մի տեսակ կեղտոտ, կոշտ ու կոպիտ, բայց և, անկասկած, մեծահասակի ու «տղամարդու» նման: Ի՞նչ օգուտ, որ դու նրանցից ավելի խելացի էր և լավ էր սովորում դպրոցում: Ի՞նչ օգուտ, որ դու ավելի լավ էր հագնվում, մազեր խնամքով սանրված էին ու լվացված: Ընդհակառակը, նույնիսկ այդ տարբերություններն էլ կարծու նրանց համար առավելություն լինեին: Վեբերի կարգի տղաների մուտքը «մեծ աշխարհ», որն ինձ մի տեսակ մթամած ու արկածախնդրության կերպարանքով էր պատկերանում, թվում է, թե ապահովված էր առանց որկից լուրջ ոժվարությունների, մինչետև իմ առաջ «աշխարհ» կատարելապես փակ էր, և, սակայն, հասակ առնելու, դասերին պարտադիր հաճախելու, քննություններ հանձնելու, դաստիարակվել-կրթվելու գնով, մեծամեծ ոժվարություններ հաղթահարելով միայն կարելի էր նրա դարպաներից ներս սողոսկել: Բնականաբար, այդպիսի տղաներին էլ հենց հաջողվում էր փողոցներում պայտեր, դրամ ու պղնձե իրեր գտնել, իրենց ծառայությունների դիմաց նրանք վարձ էին ստանում, ձրի, հեշտ ու հասանելի միջոցներով օգտվում էին խանութներից և ամեն կերպ բարգա-վաճում էին:

Ես այն աղոտ զգացումն ունեի, որ իմ բարեկամությունը Վեբերի և նրա խնայատուիքի հետ ոչ այլ ինչ էր, քան մի անսովոր կիրք այդ «աշխարհի» նկատմամբ: Վեբերի մեծ սիրո արժանի ոչ մի բան ես չեմ գտնում, բացի իր այն մեծ խորհուրդից, որի շնորհիվ նա ավելի մոտ էր կանգնած մեծահասակներին, քան ես. Նա շատ ավելի ազատ, ավելի մերկ ու կոպիտ աշխարհում էր ապրում, քան ես՝ իմ անուղներով ու ցանկություններով:

Դա այս ուժ առնելու լուծում եղանակն էղանակ հնարքու ու առաջնակ էղանակ է և կանխազգում էի, որ մի գեղեցիկ օր հիասթավիվելու եմ նրանից, և որ ինձ երբեք էլ չի հաջողվելու կենաց մոգական բանալին խել նրանից, այդ գաղտնիքը դուրս կորցել նրա ձեռքերից:

Եթե ինձ հրաժեշտ տվեց ու հեռացավ, ես վստահ էի, որ հիմա նա սովորուվ, անկաշկանդ ու անշտապ տուն էր վերադառնում՝ տոգորված ինքնարավ երշանկությամբ, գերծ ամեն տեսակ տրումությունից ու նախապաշտումներից: Եթե ճանապարհին սպասուիիների կամ բանվորուիիների էր հանդիպում և ուշի-ուշով հետաքրքրվում էր նրանց ինչ-որ տեղ հանելուկային, գուց նաև հոյակապ և կամ մեղսավոր կյանքով, նրա համար դա բոլորովին էլ հանելով կամ հրեշավոր գաղտնիք չէր, կամ վտանգ, և ոչ իսկ վայրի ու հետաքրքրաշարժ մի բան, այլ շատ բնական, ծանոթ ու հոգեհարազատ մի տարերը, ինչպես ջուրը ձկան համար: Այդպես էլ կար: Խսկ ինձ համար դա կատարելաված անծանոթ մի իրականություն էր, ես մշտապես խարխափել եմ միայնության ու անորոշության մեջ՝ հոգի լիքը ենթադրություններով, բայց և անվտահ ամեն ինչի հանդեպ:

Այդ օրը, սովորականի պես, կյանքը նորից ու նորից անհուսալիորեն անհամ էր ու տաղտկալի, նրանում երկուշարթիական ինչ-որ բան կար, թեև շաբաթ էր, բայց այդ օրվանից երկուշարթվա հոտ էր փշում, որը մյուս օրերի համեմատ երից ավելի երկար ու երից ավելի ձանձրալի էր թվում: Անձված ու ատելի էր կյանքը, այն ասես խաբկանք ու զաղուելի հեղձանք լիներ: Մեծահասակները սովոր են ձևեր թափել, թե իբր աշխարհը կատարյալ է, և իրենք էլ նրա գեղեցկությունները վայելող կիսաստվածներ են, խսկ մենք՝ փոքրիկ տղաներս, ոչ այլ ինչ ենք, քան պարզապես չարամիտ ստահակներ ու ճիվալներ: Խսկ այդ ուսուցիչները.... Դու քո մեջ պատվախնդիր տենչանքներ ունեիր, անկեղծ օրտով ու սիրահուար նվիրումով ձգուու էիր դեպի բարին ու գնդեցիկը, պատրաստ էիր հենց թեկուզ սերտելու հունարենի անկանոնությունները, կամ հագուստ մաքուր պահել, ինազանդվել ծնողներիդ, և կամ լուր ու անտրունչ, հերոսաբար կրել ամեն տեսակ ցավ ու վիրավորանք: Այս, նորից ու նորից, խանդակարոտ ու հյու-հնազանդ դու բարձրանում էիր ինքն թեզանից, որպեսի նվիրվես աստծուն, մաքուր ու ազնիվ կատարելության ճանապարհով ընթանաս դեպի բարձունքը, ապրես առաքինի կյանքով, անտրունչ ու համբերատար դիմադրես չարին, օգնես դժբախտության մեջ գտնվողներին, — ավանդ, կրկին ու կրկին այդ ամենը մնում էր սոսկ որպես փորձ, ձգուու, կարծան ճախրի... Սակայն նորից ու նորից, բացում անգամներ, օրեր և նույնիսկ ժամեր անց ինչ-որ բան էր տեղի ունենում, որը չափութք է լիներ, ինչ-որ գարշելի, վրդովեցուիչ ու ամոթալի մի բան: Եվ կրկին անգամ, ամենաաղնքնորդ ու ազնվարար ձգուուների ու վախտադրությունների բարձունքից դու հանկարծ, ասես ստիպունքով գահավիժու էիր ցած՝ մեղսավորության ու ստորությունների, գարշանքի ու աօրեականության մեջ... Այդ ինչպես էր պատահում, որ դու քո սրտու հրաշալիորեն ու խարպես հասկանում և գգում էիր բարի մղումների

գեղեցկությունն ու ճշմարտացիությունը, մինչեւ քո ողջ կյանքը (Ներառյալ նաև մեծահասակների ընկերակցությունը) անընդհատ ու, մշտապես բուրում էր գարշահոտությամբ և թեզ անկասելիորեն առաջնորդում դեպի ստորության ու փոքրոգության թագավորությունը: Այդ ինչպես էր լինում, որ առավոտյան կողմ, անկողնու մեջ ծավատիկ նստած, կամ էլ գիշերները՝ վառված մոմերի առաջ, դու սրբազն երդումով ուխտ էր կնքում ամենայն բարու ու լուսավորի հետ, ոգեկոչում էր աստծուն և հավերժական պատերազմ հայտարարում ամենայն արատավորին, իսկ հետո, գուցե ընդամենը մի քանի ժամ անց, ամենավախսկու կերպով հրաժարվում էր այդ նույն սրբազն երդումից ու ազնիվ մղումներից, թող որ թեկուզ և տրվելով մեկնումեկի գայթակղիչ ծիծաղին, կամ էլ պատահաբար լսած ինչ-որ դպրոցական տափակ սրբախոսություններին: Ինչո՞ւ էր այդպես: Միթե ուրիշների հետ էլ էր նույնը կատարվում: Միթե իին աշխարհի առասպելական հերոսները, հռոմեացիներն ու հուկները, ասպետներն՝ ու առաջին քրիստոնյաները, բոլոր-բոլորը ուրիշ մարդիկ էին, ինձանից տարբեր, շատ ավելի լավը, ավելի կատարյա, չար մղումներից գերծ, օժտված մի օրգանով, որից ես զուրկ էի, և որը նրանց խոչընդոտում էր երկինքներից վերստին գահակիմել առօրեականության ու գարշանքի մեջ, տիեզերական բարձունքներից ընկել անցողիկության ու թշվառության ոլորտները: Միթե այդ հերոսներին ու սրբերին անձանոթ էր նախաստեղծ մեղքը: Միթե այդ ողջ սրբազնությունն ու ազնվարարոյությունը միայն քերի, եզակի մարդկանց, ընտրյալների մենաշնորհն էր: Բայց ինչո՞ւ, չե՞ն որ, եթե ես նույնիսկ այդ ընտրյալների թվին չեմ պահիկանում, բայց, չե՞ն որ իմ մեջ էլ կար առաջնության ու գեղեցկի այդ ձգտումը, առ մաքրությունը, բարին ու լուսավորը ունեցած այդ մոլեգին ու կեղեցիչ կարոտը: Միթե աստծո արարչագործած աշխարհում ի սկզբանե այնպես է նախասահմանված, որ մարդու, դեռասի երեխան իր մեջ պիտի հավասարապես կրեր բոլոր վեհ ու ազնիվ և բոլոր չար ձգտումները, և որ նա, այդ դժբախտ ու ծիծաղելի էակը, տառապեր պիտի ու տարակուտանքի գիրկն ընկների բավականություն իրեն մշտապես հայող աստծո: Միթե այդպես էր նախասահմանված: Բայց այդ դեպքում այս աշխարհը արդյոք չեր լին դեմքի մի իսկական թատերաբեմ, արժանի, որ իր վրա թթեին... Այդ դեպքում, արդյոք, աստված չեր լինի իսկական ճիշգա, ինելագարի մեկը, դամարկամիտ, անձնոնի. մի պճնամոլ: Ախ, հենց այն միջոցին, եթե ես մի գերագույն ըմբոստ կրքոտությամբ իմ մտածումներին էի տրված, իմ հլու-հնազանդ սիրտը ջղաձգվում ու ցընցվում և դատափետում էր ինձ՝ աստվածանարգության մեդադրանքով...

Արդեն երեսուն տարի է անցել, բայց ես աչքերիս առաջ կրկին պարզորշ տեսնում եմ այն անտառապահի տնակը՝ բարձր ու մթնողած լուսամուտներով, որ բացվում էին հարևան տան պատաշարի դիմաց և որոնցից խիստ աղոտ լուս էր թափանցում, այդ տնակը՝ սպիտակեցված եղևածեն աստիճաններով ու միջնահարթակներով, ողորկ ու պինդ փայ-

տից շինված բազրիքով, որ փայլելու չափ հարթեցվել էր այն բանից, որ ես հազարավոր անգամներ ցած էի սահել նրա վրայով....ինչքան էլ որ հեռացել եմ իմ մանկությունից, որքան էլ որ այն ամբողջության մեջ ինձ անհասկանալի ու հեքիաթային է թվում, այժմ էլ ես ճշտորեն մտաքերում եմ այն ամենը, ինչն այն ժամանակ, երջանկությունն ու դժբախտությունը մեկտեղած, ապրում էր իմ մեջ: Դեռ այն ժամանակ իմ մանկական հոգում բույն դրած այդ բոլոր գգացումները այդպես էլ հարատևեցին-մնացին իմ մեջ. կասկածը սեփական լիարժեքության նկատմամբ, տատանումները ինքնասիրության ու փոքրոգության, աշխարհը մերժող իդեալիզմի և առօրյա գգայունակության միջև: Եվ ինչպես այն ժամանակներում, այնպես էլ հետագայում իմ հոգու այդ հատկանիշների մեջ ես հարյուրավոր անգամներ մեկ, ամորալի հիվանդության, մեկ էլ վեհացնող խզախության նշաններ էի տեսնում, և ժամանակ առ ժամանակ հավատում էի, որ այդ չարչարանաց ճանապարհով աստված ինձ առաջնորդում էր դեպի մի այնպիսի տվյալտափն միայնության ու ինքնախորասուզման գիրքը, որից հազարավոր մարդիկ տառապագին տանջվում են իրենց ողջ կյանքում: Երբեմն էլ դրանում ես ուրիշ ոչինչ չի տեսնում, բայց թշվառ անոնշնաշարության ու ճարահատյալ նյարդայնության վեյցայությունից:

Եթե փորձեմ բոլոր այդ գգացումները և նրանց տանջալի հակամարտությունները ինչ-որ գերագույն գգացումի հանգեցնել, և այն մի եզակի անոնով կնքելու լինեմ, ապա դրա համար ավելի հարմար անուն, քան սարսափը ես չեմ կարող գտնել: Այս, ուս սարսափ էր, վախ և անվստահություն, ահա թե ինչ էի ես զգում իմ այն թունավորված մանկական երջանկության բոլոր պահերին. երկյուղ պատժի հանդեպ, երկյուղ սեփական հոգու գեղումների նկատմամբ, որոնք այն ժամանակ առ արգելված էին ու հանցավոր էին համարվում:

Այն ժամանակ էլ, որի մասին ես հիմա պատմում եմ, երբ ես աստիճանաբար լուսավորվող սանդուղքով բարձրանախսի մոտենում էի ապակե դրանը, սարսափի զգացում ինձ համակեց: Այն միշտ սկսվում էր որովայնում սեղմում-ծակոցների նախանշանների հայտնությամբ, հետո կամաց-կամաց բարձրանում էր դեպի կոկորդս ու այնտեղ վերածվում շնչարգելության ու հեղձանքի: Նման դեպքերում, ինչպես եղավ նաև այն ժամանակ, ես ցավ պատճառող վրդովմունք ու խռովը էի իմ մեջ զգում, մի տեսակ կասկածամտություն բոլոր նրանց նկատմամբ, ովքեր կարող էին այդ պահին ինձ տեսնել, միայնակ մնալու ու թաքնվելու պահանջ էի զգում:

Այդ տհաճ ու նողկալի, այդ իսկապես հանցավոր զգացումով էլ ես մուտք գործեցի միջանցք, ապա և հյուրասենյակ: Երբեռաստ գգում էի. այժմ որևէ լավ բան մի սպասիր, այսօր դիվաց հանդես է, ինչ-որ բան է պատահելու: Ես այդ բանն զգացի այնպես, ինչպես ծանրաչափն է զգում փոփոխվող մթնոլորտային ճնշումը, զգում է անելանելի անձարակությամբ ու սպասողականությամբ: Ախ, նա նորից այստեղ է, նա, որ պնուն-

չունի... Այդ դեմ տուն է սողոսկել, նախաստեղծ մեղքը փորփրում է սիրոս, հևկայաշափ, բայց և անտեսանելի ամեն պատի եւսում ինչ-որ մի հոգի, ինչ-որ մի հայր կամ դատավոր էր թաքնված:

Ես դեռ ոչինչ չեմ հասկանում, ողջը դեռևս միայն Ենթադրություն էր, նախազգացում, կեղեքի անհարմարություն: Նման պարագաներում լավագույն բանը հաճախ իհվանդ լինելու էր, այդ դեպքում ամեն ինչից կտրված՝ հանգիստ կարող էր պանկել որ անկողնում: Երբեմ ամեն ինչ բարեհաջող վախճան էր ունենում, հանկարծ հայտնվում էին մայրս կամ քոյրս, թեյ էին մատուցում, և դու քեզ գգում էր քեզ սիրողների խնամքին հանձնված, կարող էր լայ լինել կամ քնել, հետո էլ առողջ ու թարմացած արթանանալ՝ կատարելապես փոխված, ազատագրված ու լուսավոր աշխարհում:

Հյուրասենյակում մորս չգտա, իսկ խոհանոցում միայն սպասուիին էր: Որոշեցի բարձրանալ հորս մոտ, դեպի ուր մի նեղ սանդուղք էր առաջնդում: Թեև հորիցս վախենում էի, բայց երբեմն-երբեմ խոհեմությունը պահանջում էր դիմել նրան, մի մարդու, որի առաջ քանիցս մեղավոր եւ եղել: Մորս մոտ միխթարություն գտնելը շատ ավելի հեշտ էր ու հնարավոր, սակայն հայրական միխթարությունը առավել թանձ էր ու արժեքավոր, քանի որ դա կնշանակեր հաշտություն դատապարտող խոհիդ հետ, հաշտություն և մի նոր վերամիավորում բարի ուժերի հետ: Shwad խոսակցություններից, հարցաքննություններից, խոսովվանություններից ու պատիժների Ենթակ-վելուց հետո՝ հաճախ ավելի բարի դարձած ու մաքրված էի դուրս գալիս հորս մոտից, ճիշտ է՝ պատժված ու գլխիս մի լավ քարոզ կարդացված, սակայն միշտ էլ լիբը նորանոր ցանկություններով. ասես հզորագույնի հետ ունեցած հանդիպումից նոր ուժ ստացած և պատրաստակամ կովելու թշնամական չարի դեմ: Որոշեցի ներկայանալ հորս և նրան ասել, որ ինձ վատ եմ գգում:

Դեպի աշխատասենյակ առաջնորդող նեղ սանդղաշարով վերև բարձրացած:

Այդ նեղ սանդուղքը իր պաստառների յուրահատուկ բույրով, սնամեջ ու թեթև, փայտաշեն աստիճանների չոր ճռնչոցով, շատ ավելի նշանակալի սահման, ավելի կարևոր բնագիծ էր՝ ճակատագրի դարպասներին մերձենալու՝ իմաստով, բան նախարարի: Այդ աստիճաններով մեկ անգամ չէ, որ կարևորագույն հարցեր լուծելու համար ուխտագնացություններ էին ձեռնարկել, հարյուրավոր անգամներ նրանցով բարձրանալիս՝ ես սարսափի ու խոհի խայթոցների, համառության ու վայրի չարության զգացումներ էին ունեցել, հաճախ էլ նրանցով ետ դառնալիս՝ փրկության ու ինքնավստահության նորահայտ հոլովումներ էին ինձ համակել: Մեր տան ներքեկի հարկաբաժինը ամբողջապես գտնվում էր մորս և երեխաներին տիրապետության տակ, այստեղի օդը համեմատարար հեշտ էր շընչվում: Իսկ այստեղ՝ վերևում, բնակվում էին իշխանությունն ու ոգեղեն միտքը, այստեղ գտնվում էին դատարանն ու սրբատեղին՝ «հայրական թագավորությունը»:

Ամեն անգամվա պես երկյուղածության ու ճնշվածության գգացումով ես ցած սեղմեցի հնառու բռնակը և դուրը կիսաբաց արի: Հորս աշխատասենյակը ծանոթ բույրով բացվեց իմ առաջ. այդ բույրը գոյանում էր գրեթե ու թանաքամանների շնչառությունից, որին գոմարվում էր կիսաբաց պատուհաններից ներս թափանցող երկնագույն օդը, սպիտակ, մաքրոր վարագույնները, քյոլնյան անուշահուսությունների սրվակից տարածվող հազիվ զգայելի բույրը և սեղանի վրա սովորաբար եղող խնձորը: Բայց սենյակը դատարկ էր:

Կիսով չափ հիասթափվածության, կիսով չափ թեթևության գգացումով ես ներս մտա: Զգունով խացնել ոտնաձայներս՝ քայլում էի թաթերիս վրա բարձրացած, ինչպես որ մենք սովոր էինք այստեղ, վերնահարկում քայլել, երբ հայրս ընած էր լինում կամ տառապում էր գլխացավից: Հենց որ իմ այդ գգուշավոր ընթացքը գիտակցվեց իմ կողմից՝ սիրոս սկսեց արագ-արագ խփել, որովայնում ու կողորդում սաստիկ ու անտառնելի ճնշում զգացի: Սարսափի զգացումով համակված, գաղտագողի սողալով, քայլ առ քայլ առաջանում էի, հետո եկավ մի պահ, և ես այլևս ոչ թե պարզապես այցելու էի կամ հայցվոր, այլ մի անկոչ հյուր, բռնությամբ ներխուժած մի չարագործ: Հորս բացակայությամբ արդեն մի քանի անգամ ծածուկ կերպով ես սողոսկել էի նրա հարկաբաժնի սենյակները, քանից զննել ու հետախուզել էի նրա խորհրդավոր թագավորությունը, երկու անգամ էլ այնտեղից, նույնիսկ, որոշ բաներ էի թոցրել:

Դրա հետ կապված հիշողությունները պաշարեցին ինձ, և ես իսկովն հասկացած հիմա դրբախտություն է պատահելու, հիմա ինչ-որ բան է տեղի ունենալու, հիմա ես արգելված ու չարացես մի արարք եմ կատարելու: Գլխում փախուստի մասին միտք էլ չկար... Ավելի ճիշտ մտածում էի, կրքոտ ու տենդագին խորհում այն մասին, թե գուցե փախչեմ-ազատվեմ, աստիճաններով ցած վազեմ, առանձնանամ սենյակումս, կամ ինձ դուրս գցեմ պարտեզ, բայց նաև զգում էի, որ այդ բանը չեմ անի, ես դա չեմ կարող անել: Այս, ինչպես կուզենայի հանկարծ հարևան սենյակից լսել հորս ձայնը, որ նա ներս մտներ ու խափաներ այս սարսափելի ու դիվային ուժով ինձ բռնատիրած ու գայթակելած կախարդանքը: Օ, երանի թե նա ներս մտներ.... Միայն թե մտներ, թեկուզ և հայոյեր-հանդիմաններ ինձ, միայն թե ներս մտներ, հայտնվեր, քանի դեռ ուշ չէր...

Ես հազարի, որպեսզի մատնեմ իմ ներկայությունը, պատասխան չըստանալով՝ կամացով շշնչացի: «Հայրիկ!... Շուրջս ամեն ինչ լուս էր, պատերի մեջ լուս էին բազմահարկ գրեթեր, պատուհանի փեղկը տարութերվում էր բամուց և արկի խալացկուն շողը արտացոլվում էր հատակին: Ոչ ոք չկար, որ փրկեր ինձ, իսկ իմ մեջ ուժ չկար հակառակվելու դիվաց կամքին: Հանցագործություն կատարելու մտքից ստամոքս սեղմում էր, մատներիս ծայրերը սառչել էին, սիրոս անհանգիստ տրոփում էր: Ես դեռ կատարելապես ոչինչ չգիտեի, թե ինչ եմ անելու.... Գիտեի միայն, որ ինչ-որ զարդելի մի բան:

Մոտեցա գրասեղանին, ձեռքս մի գիրը վերցրեցի ու կարդացի անգլերեն վերնագիրը, որը սակայն չհասկացա: Անգլերենը ես ատում էի, — այդ լեզվով հայրս միշտ գրուցում էր մորս հետ, երբ խոսակցությունը պոտփում էր այնպիսի նյութի շուրջ, որ մենք՝ երեխաներու, չպետք է հասկանայինք, կամ էլ երբ վիճում էին: Սեղանի վրա կար մի սրբակ, որը լին էր բացամարտիվ մանր-մունը իրերով՝ ատումի խոզանակներ, պողպատե գրչածայրեր, գնդասեղներ: Ես վերցրեցի երկու գրչածայր և գրպանս խորեցի, աստված գիտե թե ինչու, դրանք ինձ բոլորովին պետք չէին, դրանցից ես շատ ունեի: Ես այդ քայլին դիմեցի սոսկ ինձ պաշարած ինչ-որ ուժի ճնշման ներքո, մի ուժ, որն ինձ ստիպում էր միշտ չար գործել, ինքու ինձ վնասել, սեփական գլուխս մեղքի տակ դնել: Հորս թղթերը քրքրելին՝ աշըովս ընկավ մի անավարտ նամակ, ուր ես կարդացի հետևյալ բառերը. «Աեր ըլտանիքում ամեն ինչ կարգին է, փառք աստծո», և նրա ձեռագրի լատիներեն տառերը պլշած աշբերով ինձ էին նայում:

Հետո ես անշշունչ սողոսկեցի ննջասենյակ: Այնտեղ տեղադրված էր հորս երկաթակուր շարժական մահճակալը, կողքին ընկած էին նրա շագանակագույն հողաթափերը, գիշերասեղանի վրա հանգրվանել էր թաշկինակը: Այդ սառն ու լուսավոր սենյակում ես լիաժոր շնչում էի հայրական օդը, և իմ առաջ պարզորոշ գծագրվեց հորս կերպարանը, ակնածանքն ու ըրբոստացումը ընդվզում էին իմ ծանրացած սրտում: Լինում էին պահեր, երբ ես ատում էի նրան, չարությամբ ու չարախնդությամբ մտաբերելով այն օրերը, երբ նա տառապում էր գլխացավից, խաղաղ և ուղղաձիգ դիրքով պառկած էր լինում իր ցածրադիր շարժական մահճակախն, ճակատին՝ խոնավ թաշկինակը, և երեխն-երեխն հողոցներ էր հանում: Եվ, թվում է, թե ես գլխի էի ընկնում, որ նրան էլ, այդ հզրագույն էակին, ապրելը այնքան էլ հեշտ չէր տրվում, որ նրան էլ, բոլորի կողմից հարգված այդ անձնավորությանը, անձանոթ չէին հոգու կասկածամիտ տվյատանքներն ու վախի զգացումը: Այնժամ ինձ պաշարած տարօրինակ ատելության զգացումը ցնում էր, նրան փոխարինելու էին գալիս կարեկցանքն ու սրտահույզ նրբավարությունը: Մինչ այս, մինչ այն, ստացվեց այնպես, որ ես մերենայաբար դուրս քաշեցի պահարանի դարակը: Այնտեղ դրված էին սպիտակեղենի կապոցներ և նրա սիրած քյոլնյան մակնիշի անուշահոտությունների մի սրբակ: Խմ մեջ ցանկություն առաջացավ հոտ քաշել նրանից, բայց սրբակը դեռևս օգտագործված չէր և ամուր զմուված էր, ուստի և ձեռք չտվեցի: Դրա կողքին ես գտա մի փոքրիկ տուփ՝ ծամոններով լիքը, որոնք բաղցր ռեհանի բույր էին արձակում, և մի քանիսը իսկույն բերանս խորեցի: Հիասթափության ու հորսահատության մի պահ էր դա, այնուհետև սթափություն իջավ վրա, միաժամանակ ուրախ էի, որ այլևս ոչինչ չգտա, որ արժանի լիներ ինձանով անելու:

Ծրագրերից արդեն հրաժարված ու ես կենալու պատրաստ՝ ես, բոլորովին պատահարար, մեկ ուրիշ դարակ էլ դուրս քաշեցի. Նպատակս

այն էր, թերևս, որ թոցրածս գույգ գրչածայրերը իրենց տեղը դնեմ ու թերևնացած շունչ քաշեմ: Գուցե և ուշ չէր ետ դառնալ, զոյալ արածիդ համար, գուցե հնարավոր էր նորից բարին անել ու փրկվել: Ըստ երևույթին, իմ գլխավերնում պարզված աստծոն սրբազն աշք ավելի զորեղ էր ամեն տեսակ գայթակղությունից...

Հանկարծ, վերջին պահին, հայացքս ընկավ կիսարաց արված դարակի ձեղչից ներս: Այս, երանի թե այնտեղ գուպաներ, վերնաշապիկներ կամ իին լրագրեր լինեն... Բայց հենց այստեղ էլ գայթակղությունը գլուխ բարձրացրեց, և մենք վայրկյանում, կայծակի արագությամբ նորից վերադարձավ ինձ լքած ահասարսու շղագությունն ու սարսափը, ձեռքերս կարկամեցին ու սկսեցին դղողալ, սիրոս մոլեֆնորեն սկսեց տրոփել: Ծարի կեղասերտից հյուսկեն, հնկական թե մեկ ուրիշ էկզոտիկ երկրից ներմուծված անոթի մեջ աշքովս ընկավ մի զարմանահրաշ, գայթակղից բայց՝ սպիտակ շաբարափոշու մեջ թաթախված մի ամբողջ կապոց չորացրած թուզ...

Հեռու առնելուն պես զգացի նրա հոգեպարար ծանրությունը: Հետո դուրս կորցեցի երկու-երեք թուզ, մեկն անմիջապես բերանս խորեցի, մնացածը գրպանս դրի: Այդ պահից սկսած՝ ինձ համակած սարսափն ու արկածախնդրության ոգին ի չիք դարձան: Եվ քանի որ այլևս փրկության կամ միխթարության մասին խոր լինել չէր կարող՝ ես վճռեցի այստեղից գոնե դատարկ գրպանով չհեռանալ: Երեք-չորս թուզ էլ դուրս կորցեցի տուփից, որը սակայն դրանից բոլորովին էլ չթեթևացավ, հետո էլի-էլի, և երբ գրպաններում այլևս ազատ տեղ չկար, իսկ տուփի առնվազն կեսն արդեն դատարկվել էր, մնացած թզերը ես փոքրից տուփում այնպես, որ պակասը աշք չծակեր: Հետո, հանկարծակի վախ զգալով, կտրուկ շարժումով ես հրեցի դարակն ու դուրս փախսա, վազեցի-անցա երկու սենյակների միջով, ապա աստիճաններով ցած սուրացի դեպի իմ փոքրիկ խուցը, շնչասպառ ինձ ներս գցեցի ու ծավող ծնկներով, հազիվ ոտքի վրա կանգնած՝ հենվեցի բարձրադիր սեղանին:

Ծուտով հնչեց ճաշն ազդարարող զանգը: Մթափ գլխով, կատարելապես զգատացած և նողկանից զգացումով՝ ես թզերը խցկեցի գրադարակներիս ետևը, թաքքրեցի գրեթե մեջ ու գնացի ճաշելու: Սեղանատան դուռն մոտ նկատեցի, որ ձեռքերս կաշուն են դարձել: Խոհանոցում լվացվեցի: Ճաշատեսնյակում բոլորը սեղանի շուրջը նստած սպասողական դիրք էին բռնել: Ես արագ ողջունեցի բայրոին, հայրս սեղանի վրա աղոթք կարդաց, և ես թեքեցի ապուրիս կողմը: Ուտելու ցանկություն չունեի, յուրաքանչյուր պատրազ մեծ ոժվարությամբ էի հաղթահարում: Կողքին նստած էին բույրերս, դիմաց՝ ծնողներս, բոլորն էլ բարձր տրամադրության մեջ, առանց հետին մտքերի, միայն ես, հանցավորս, ճնշվում էի նրանց ներկայությունից, միայնակ ու թշվառ. Վախենալով ամեն մի հարազատ հայացքից, բերանում դեռ թարմ էր թզի համը: Արդյոք այնտեղ, վերևում, չեմ մոռացել փակել ննջասենյակի դուզը: Խսկ դառակները.

Ահա և աղետը պայթեց: Ես կիամաձայնվեի կտրել տալ ձեռքս, միայն թե իմ թոշքած թզերը նորից հայտնվեին պահարանում: Որոշեցի դրանցից ազատվել, եթու դպրոց տանել ու ընկերներին մեջ բաժանել: Միայն թե ազատվել դրանցից, միայն թե այլևս դրանք չերևային:

— Տեսրդ այսօր լավ չէ,— նկատեց հայրու: Ես խոնարհվեցի ափսեիս վրա, բայց և զգում էի դեմքիս գամված հորու հայացքը: Հիմա նա ինչ-որ բան կնկատի: Չե որ նա միշտ ամեն ինչ նկատում էր: Էլ ինչո՞ւ էր ինձ այսքան տանջում: Ավելի լավ էր իսկուն ինձ մի կարգին շշպեր, իր մոտ տաներ ու թեկուզ սպաներ:

— Հիմանդ ես,— նորից լսեցի նրա ձայնը: Ես ստեցի՝ ասելով, թե գլուխս է ցավում:

— Ճաշից հետո, ուրեմն, կգնաս մի քիչ կպառկես,— ասաց նա: — Այսօր ինչ դասեր ունեմ:

— Միայն մարմնամարզություն:

— Դե, մարմնամարզությունից քեզ վնաս չկա: Բայց մի քիչ կեր, մի քիչ ստիպի քեզ, որ սոված չմնաս: Ոչինչ, շուտով կանցնի:

Գլուխս կախ գցած՝ նրա կողմը նայեցի: Մայրիկը ոչինչ չասաց, բայց վստահ էի, որ նա էլ ինձ էր նայում: Ապուրս մինչև վերջ կերա՝ կոհիվ տալով մսի ու բանջարեղենի հետ, այդ ընթացքում երկու բաժակ ջուր խմեցի: Այլևս ոչինչ տեղի չունեցավ: Ինձ հանգիստ թողեցին: Եվ երբ ամենավերջում հայրս շնորհակալական աղործ կարդա՝ «Ընորհակալ ենք քեզանից, Տեր, զի դու ողորմած ես, և անսահման է բարությունը», բացված վերքի պես այրող մտքերս ինձ նորից բաժանեցին այդ լուսավոր, սուրբ ու հավատով առլի խոսքերից և բոլոր-բոլորից, ովքեր նստած էին սեղանի շուրջը. իմ խաչակնքված ձեռքերը կեղծիք էին, աղոթողի կեցվածքս՝ սրբապիտություն:

Երբ պատրաստվում էի վեր կենալ՝ մայրս մազերս շոյեց և մի պահ ձեռքը դրեց ճակատին՝ համոզվելու համար ջերմություն ունեմ, թե ոչ: Ինչ դառն էր այդ ամենը...

Մտնելով խուցս՝ կանգ առա գրադարակի առջև: Առավոտվա նախազգացումներս ինձ չեին խաբել, բոլոր նախանշանները հաստատվեցին: Օրն իրոք որ տարաքախտ դուրս եկավ, վատթարագոյնը երբեւ իմ ապրած օրերից: Դրանից ավելի վատը հնարավոր էլ չեր պատկերացնել: Սրանից ավելի վատին հանդիպելու դեպքում մարդուս այլ բան չեր մնա անելու, քան պարզապես վերց տալ իր կյանքին: Լավագույն դեպքում կամ պետք էր թույն ընդունել, կամ էլ կախվել: Եվ ընդհանրապես նման պարագաներում մեռնելու ավելի հեշտ էր, քան ապրելը, քանզի ամեն ինչ այնպես տհած էր ու ատելի: Ես մտածկոտ կանգնել էի ու մտացրիվ դրության մեջ վերցնում էի պահ տված թզերն ու մեկը մյուսի եռևից մերենայաբար կուլ տալիս:

Աչքս ընկավ մեր խնայատուիին, այն դրված էր գրադարակի վրա, գրերի միջև: Դա մի փայտաշեն ծխախոտատուփէր, որը ես ամրացրել էի

մեխերով: Մանրադրամի համար ձեղնահարկում ես գրպանի դանակով մի կոպիտ ձեղը էի բացել: Այդ ձեղը շատ անհմուտ ու կոպիտ էր արված, փայտի թեփուկներու ու տաշեղները մնացել էին: Նույնիսկ այդ հասարակ բանն էլ չկարողաց հարկ եղածին պես պատրաստել: Ես ընկերներ ունեմ, որոնք նման իրեր պատրաստում էին այնպես շանսիրաբար, մեծագոյն համբերատարությամբ ու բծախնդրությամբ, որ չէիր տարբեր հմուտ հյուսնի կատարած աշխատանքից: Իսկ ես միշտ էլ անփոյթ եմ եղել, շարունակ շուապում ու ոչինչ մինչև վերջ չեր հասցնում: Այդպես անփոյթ էի վերաբերվում նաև իմ ինքնաշեն փայտն առարկաների, ձեռագիրս, նկարներիս, թիթեռնիկների հավաքածուիս և ընդհանրապես ամեն ինչի նկատմամբ: Ձեռքից ոչինչ չեր գալիս: Եվ ահա հիմա էլ գողություն եմ կատարել, ավելի ստոր բան հնարավոր չէ պատկերացնել: Գրչածյաերն էլ ոեր գրպանում էին: Ինչո՞ւ: Ինչո՞ւ ես դրանք վերցրի, իմ ինչին էին պետք: Եվ ինչո՞ւ եմ շարունակ կամքին հակառակ բաներ անում:

Ծխախոտատուփում զնգնգում էր միակ դրամը՝ Օսկար Վերերի տասանոցը: Այն օրվանից դրան ոչինչ չեր ավելացվել: Խնայատուփի հետ կապված պատմությունը նույնպես իմ մտահղացուն էր... Ոչինչ չեր ստացվում, ամեն ինչ թարսվում էր, ինչին որ ձեռնարկում էի՝ սկզբից ևեթ խափանվում էր... Գրողը տաներ այդ անհիջյալ խնայատուփը... Ես այլևս ոչինչ չեր ուզում դրա մասին լսել:

Այսպիսի չարագուչակ օրերին՝ ճաշի և դասերի սկսման միջև ընկած ժամանակաշրջացքը միշտ էլ ձանձրալի ու անտանելի էր լինում: Խաղաղ, հաջողակ ու հաճելի օրերին, ընդհակառակը, դա մի գեղեցիկ ու ցանկալի ժամանակամիջոց էր. տենյակում նստած՝ ես կամ ինչնիկացիների մասին պատմող մի գիրը էի կարդում, կամ էլ՝ ճաշից անմիջապես հետո քայլերս ուղղում էի դեպի դպրոցի հրապարակը, ուր հանդիպելով չարացճի-ձեռներեց դասընկերներից որկից մեկին՝ խաղեր էինք խաղում, բղավում, վազգում, գգվոտվում իրար հետ, մինչև որ դպրոցի զանգը մեզ հրավիրում էր դեպի կատարելապես մոռացված «հրականությունը»: Բայց այնպիսի օրերին, ինչպիսին այսօրվա օրն էր... միթե խաղալու ցանկություն կարող էր ունենալ, ախոր ինչպես պիտի սանձեիր կրծքիդ տակ մոլեցնող դերին: Զգում էի, որ այսօր չէ վաղը, գուցե և շատ շուտով, այդ բանը կատարվելու էր... Իմ բախտը վերջնականապես վճռվելու էր: Եվ բավական էր մի փոքր էլ, մազաշափ իսկ սարսափի, տառապանքի ու վարանման զգացում ունենալի, որպեսզի այն վրա հասներ ու վախի հետ հաշիվներս մեկնարկիշտ փակեր: Այսօրվա նման մեկ ուրիշ գեղեցիկ օր էլ ես վերջնականապես շնչահեղձ կլինեմ շարի խորխորատներում, և համար մոլեցնության մեջ, այս կյանքի անտանելի անհեթեթության պատճուռ ինչ-որ սարսափելի ու բախտորոշ բայլ կձեռնարկեմ, ինչ-որ ահավոր, բայց փրկարար մի բայլ, որը, սակայն, հավիտնապես վերջ կդնեմ տառապանքներին ու սարսափին: Սակայն անհայտ էր, թե ինչ կերպ էր այդ արտահայտվելու: Բայց ինձ հանգիստ չովող երևակայական պատ-

կերներն ու չար նախազգացումները արդեն բազմիցս պղտորել են միտքս. այդ ոճրագործության երևակայական պատկերների միջոցով ես պատրաստվում էի վրեժ լուծել աշխարհից, միաժամանակ խորտակելու, ոչչացնելու էի նաև սեփական անձս: Երբեմն ինձ պատկերանում եր, թե ես կրակի եմ մատուում մեր տունը. հսկայամարմին կրակի լեզուները տարուրերկում էին գիշերվա մեջ, կրակը լավիկում էր տներն ու փողոցները, ողջ քաղաքը ծառ եղած մոնչում էր սևաթույր երկնքի դեմ: Երբեմն էլ իմ երևակայական ոճրագործության առանցքը պտտվում էր հորից վրեժ լուծելու, դաժան ու գազանաբարու սպանության գաղափարի շուրջը: Դրանից հետո ես որոշել էի ինձ այնպես պահել, ինչպես այն հանցագործը, այն միակ, իսկական հանցագործը, որին ես տեսել էի մեկ օր մեր քաղաքի փողոցներով շղթայակապ տանելիս: Դա մի տուն կտրող ավագակ էր, գող: Երկու ոստիկան, մեկն առջևից, մյուսն ետևից, օսլայած ու կոշտ գլխարկն աչքերին քաշած այդ ոճրագործին ձեռնակապերով առաջնորդում էին նախնական հարցաքննության: Այդ մարդը, որին քարշ էին տալիս քաղաքի փողոցներով, հետաքրքրասերների բազմության, չորս կողմից տեղացոյ անեծքների, չար կատակների ու դաժան հայինյանքների աղմուկ-աղաղակի միջով, ոչնչով նման չէր այն հլու-հնազանդ, վեհերոտ չարագործներին, որոնց երբեմն հանդիպում են փողոցներում՝ ոստիկանների ուղեկցությամբ. դրանք հաճախ խեղճ ու թշվառ ենթավարպետներ կամ արհեստավորներ են լինում, որոնց կալանավորել էին մուրացկանության համար: Ոչ, այս մեկը նման չէր համեստ ու ամոթխած այն ենթավարպետներին, նրանում ոչինչ միամտություն, հնազանդություն ու լացկանություն չէր հիշեցնում, նրա դեմքին չէր խաղում պղտոր-հիմարավուն այն ժպիտը, որին ես բազմիցս ականատես էի եղել: Դա մի իսկական հանցագործ էր, նրա համառորեն վեր ցցած գլխի վրա կոկ նստած էր թիշ ճմրված գլխարկը, նա գունատ էր և ժպտում էր զգուշավոր արհամարհանքով, իսկ ժողովուրդը, որ լուսանք, թուր ու մուր էր թափում նրա գլխին, նրա կողըին ասես խուժան և խաժամուծ ամբոխ լիներ: Մյուսների հետ միասին՝ ես էլ այս օրը բռավում էի. «Բռնվեցիր, թեզ կախելն էլ թիշ է...» Բայց հետո ես տեսա նրա ուղիղ և հպարտ կեցվածքը, տեսա, թե նա ինչպես էր կապաված ձեռքերը իր առջևը պահում, և թե ինչպես էր նրա ամուր և չար գլխին նստած կոշտ գլխարկը, և այնպես հարմարավետ, ասես մի հեքիաթային թագ լիներ գլխին դրած: Եվ ինչպես էր նա ժպտում...., այստեղ ես սակեցի: Անա, ուրեմն, ես էլ կժպտամ այն հանցագործի պես և գլուխս ամուր կպահեմ, երբ ինձ առաջնորդն դեպի դատարան կամ կառափնարան, և երբ բազմությունը հավաքվի շուրջս և չարաթույն սրախոսություններ անի իմ հասցեն՝ մեկ է, ես ոչինչ չեմ ասի ի պատասխան, այլ պարզապես լուր արհամարհանքով երեսս կդարձնեմ:

Եվ երբ ինձ մահապատժի ենթարկեն, երբ մահացած լինեմ ու ներկայանամ երկինք՝ հավերժական դատավորին, այն ժամանակ էլ ես չեմ

խոնարհվի նրա առաջ, չեմ հնազանդվի նրան: Օ, ոչ, թեկուզ նա շրջապատված լինի հրեշտակների ողջ բազմությամբ, թեկուզ և շողարձակի իր ամենայն սրբազնության ու վեհաշուրջության մեջ... Թող նա անեծքներ տեղա գլխիս, թող կարգադրի ինձ եռացող կուպիրի մեջ նետել... մեկ է, ես ներողություն չեմ խորի, չեմ ստորաքարչվի, նրանից ողորմածություն ու գրասարություն չեմ աղերսի, իմ կատարած ոչ մի արարքի համար չեմ զցա... Երբ նա ինձ հարցնի. «Կատարել ես դու այս ու այս արարքները», այնժամ ես կրացականչեմ. «Այն, արել եմ, չեմ իրաժարվում, և ճիշտ եմ արել, և եթե ինձ հնձ հնարավորություն ընձեռվի՝ ես այդ բանը նորից կանեմ: Ես մարդ եմ սպանել, տներ եմ կրակի մատնել, որովհետև դա ինձ հաճույք էր պատճառում, և որովհետև ես ցանկանում էի ծաղորել թեզ ու քո զայրույթն առաջ թերել: Այն, ես ատում եմ թեզ, աստված, և ահա ես թքում եմ քո ոտքերի առջև: Դու ինձ տանջել ես միշտ ու կտտանքների ենթարկել, դու օրենքներ ես սահմանել, որոնք ոչ ոք ի վիճակի չէ պահպանել, դու հրահել ես մեծահասակներին թունավորելու մեր՝ երեխաներիս կյանքը»:

Երբ ինձ հաջողված էր կատարելապես պարզ պատկերացնել այդ բանը, և երբ վստահ էի լինում, որ այդպես էլ կլինի, որ ինձ կհաջողվի գործել այնպես և ասել հենց այն, ինչ որ մտածում եմ իիմա, այդ ժամանակ ես տրտում ուրախության պահեր էի ապրում: Բայց հսկույնեթ կասկածներն ու նարակուտանքները նորից ու նորից արշավում էին վրաս: Արդյո՞ք, ես թույլ չեմ գտնվի, արդյոք չեմ ահարեկվի, արդյոք, դիրքերս չեմ զիշի: Եվ կամ եթե ես ամեն ինչ անեմ այնպես, ինչպես իմ համար կամքն էր թելադրում, արդյոք, աստված մի ճար, մի ելք չէր գտնի, ինչ-որ խորամանկ խաղ չէր խաղա իմ գլխին, քանի որ ամենազոր մեծահասակներին էլ մշտապես հաջողված էր, թեկուզ ամենավերջին պահին անզամ, որկիցե հայթաթուղթ գործի դնել, այսպես թե այնպես ամաշենել-շփոթեցնել թեզ, բայցացականության զարդելի դիմակի տակ թաքնված թեզ արհամարհելով ստորացնել... Դե, իհարկե, ամեն ինչ սովորաբար հենց այդպես էլ ավարտվում էր:

Իմ երևակայությունը տարուրերկում էր այս ու այն կողմ, հաղթանակի դափնիներով պասկելով մեկ ինձ, մեկ տեր աստծուն, մերթ ինձ խոյացնելով մինչև անընկելի ոճրագործի բարձունքները, մերթ էլ՝ նորից գահավիթեցնելով մինչև երեխան ու թուլամորթը:

Կանգնել էի պատուհանի մոտ ու հայացը հառել հարեան տան բակի կողմը, ուր պատին փայտե տախտակներ էին հենված, իսկ թզաշափ հողակտորում կանաչին էին տալիս բանջարենի մարգերը: Կեսօրի խաղաղ մի պահի հանկարծ լսեցի ժամացույցի զարկերը, որոնք ամուր ու պինդ մինքսվեցին իմ տեսիլապատկերների մեջ, նախ մի վճիռ ու զիլ հարված լսեց, հետո էլ՝ մեկ ուրիշը: Ժամը երկուսն էր, և ես վախս սրտում՝ երևակայական սարսափների թագավորությունից վերադարձա դեպի ահասար իրականությունը: Ուր որ է սկսվելու էր մարմնամար-

գուրքայն դասը, և եթե ես կախարդական թեսերին բազմած նույնիսկ թռչել դեպի մարմնամարզության դահլիճը, միննույն է՝ ուշանալու էի: Դարձյալ մի անհաջողություն... Երկու օրից ինձ կվանչեին, կիանդիմանեին ու կպատժեին: Ավելի լավ կլիներ, որ ես այլևս ընդհանրապես դպրոց ուր չկոյիսի, քանի որ այսքանից հետո անհնար էր որևէ բան շտկել: Գուցե թե հաջողվի որևէ հարմար ու ճշմարտանման արդարացում գտնել, բայց ինչքան էլ, որ իմ ուսուցիչները ջանք ու եռանոց չեին խնայել ինձ ստել սովորեցնելու մեջ, միննույն է, այդ պահին ես ի պաշտպանություն ինձ ոչինչ չեի կարողանա ասել: Այժմ ես պարզապես անկարող էի ստել, հորինել, ինչ-որ բան սվաղելով կոնքել: Ավելի լավ կլիներ ընդհանրապես դասերին չենրկայանայի: Հոգ չէ, թող որ վերահաս մեծ դժբախտությանը կարգագանցության մի փոքրիկ փաստ էլ ավելանար...

Սակայն ժամացույցի զարկերու ինձ սրափեցրին ու հաշմեցին իմ երևակայության խաղերը: Եղավ մի պահ, որ հանկարծ ես ինձ անչափ թուլացած զգացի. անհնարինության աստիճան իրական իմ սենյակը, գրասեղանը, նկարները, մահճակալը, գրադարակները ինձ էին նայում, ամեն ինչ հագեցած էր ու շնչում էր դաժան իրականությամբ, այդ բոլորն ասես անդրաշխարհային կյանքի հրավեր կարողային գլխին, և նրանց շրջապատում ստիպված ես ապրել, քարշ տալ գոյությունդ, որն այսօր թեզ համար դարձել էր այնպես թշնամական ու հոյի անկանխատեսելի վտանգներով: Դե ուրիշ էլ ինչ կարելի էր սպասել: Միթե ես բաց չթողի մարմնամարզության դասը: Միթե ես չեի թիշ առաջ գոյություն անողը, այդ բատմնելի չարագործության հեղինակը, և միթե մինչև այժմ էլ իմ գրադարակներում առօք-փառը պահկած չեին այս թքերը, որոնք ես դեռ չեի հասցերել խաշտել: Ես ինչ գործ ունեմ այդ ոճրագործի, Տեր Աստծու և Անեղ դատաստանի հետո... Այդ ամենը դեռ կլինի, դեռ դրա ժամանակն էլ կգա, բայց այժմ, այս պահին այդ բոլորը դեռ շատ հեռու էին, դրանք սուսկ անմիտ զառանցանքներ էին և ուրիշ ոչինչ: Ես գողություն էի կատարել, և ամեն վայրկյան կարող էր հանցանքի փաստը բացահայտվել: Գուցե այն արդեն իսկ բացահայտվել էր, գուցե հայս արդեն բրերում էր պահարանի դարակները և իրազեկ էր իմ ամորակի արարքին, և վիրափորված ու զայրացած հիմա խորհում էր, թե ինչ կերպ ինձանից խոստովանություն կորզեր: Այս, գուցե նա արդեն իսկ իշնում է ինձ մոտ, և եթե ես հենց հիմա դուրս չփախչեմ, պապ հացորդ պահին իմ առջև կտսնեմ նրա մոայլ դեմքը՝ ակնոցն աչքերին: Զք որ նրա համար դժվար չեր կուհել, որ գողը ես եմ: Մեր տանը, ինձանից բացի, ուրիշ ոչ մի հանցագործ չկար, բույրերս երբեք նման բան չեն արել, ասսված գիտե, թե ինչու: Բայց հորս ինչին էր պետք պահարանում պահելու այդ թքի տուփը:

Ես արդեն դուրս էի եկել իմ խցից և ետևի դռնից մտել էի պարտեզ: Պարտեզն ու մարգագետինը լուսավորված էին արևի վառ շողերով, լիմոնաթթեռները թռչուում էին ճանապարհներին: Այժմ ամեն ինչ

ավելի նողկալի ու սարսափելի էր թվում, քան առավոտյան: Օ՛, այդ բանն ինձ արդեն ծանոթ էր, և չնայած դրան, ճիշտն ասած, այն երբեք ինձ այնպես ցավալիորեն դառը կերպարանքով չեր պատկերացել. և ինչպես էին ինձ նայելիս նրանք բուրում այնպես բնականորեն ու մաքուր խոճով, այդ բոլոր-բոլոր գեղեցկությունները, քաղաքն ու զանգակատունը, մարգագետիններն ու փողոցները, խոտերի մեջ բուսած ծաղիկներն ու թիթեռնիկները, այն ամենն, ինչին սվորաբար ուրախությամբ ես նայում, ահա այդ բոլոր այժմ մի տեսակ օտարութի ու դյուրված էին թվում... Դա էլ ինձ ծանոթ էր: Ես արդեն գիտեի, թե ինչ զգացումներ է մարդու ունենում, երբ գրունում է ծանոթ վայրերում ու տառապում նոդի խայթոցներից... Թող որ հիմա մի արտասովոր գեղեցկության թիթեռնիկ մարգագետինների վրայով թռչեր-գար սստեր ծնկներիս, միննույն է՝ չեր կարող ինձ ուրախացնել, հուզել կամ միշտարել: Թող որ իր ամենաասատ ձյուղը իմ առաջ պարզեր աշխարհիս հենց թեկուզ գեղեցկագոյն բալենին, որ էլ ոչ մի արժեք չեր ունենա, դրանից իմ մեջ ոչ մի երջանկության զգացում չեր ճառագի: Այժմ ես միայն մի բանի մասին էի մտածում՝ հեռանալ, փախչել հորիցս, պատժի սպառնալիքից, ինքս ինձանից, սեփական խղճիցս, շնչապատառ փախչել և ոչ մի տեղ հանգիստ չառնել, մինչև կատարվեր այս, ինչ իր ամբողջ անդորրությամբ ու անխուսափելիությամբ պետք է կատարվեր:

Հնասպառ վազելով՝ ես լեռը մագլցեցի, հասա մինչև անտառեզրը, կաղնիների սարից հջա ցած՝ դեպի իշխանական հողմաղացները, հետո կամրջակի վրայով նորից դեպի լեռն արշավեցի, մտա անտառ: Այստեղ էր գտնվում մեր վերջին հնդկացիական ճամբարը: Անցյալ տարի, երբ հայրս բացակայում էր տանից, մայսու մեջ՝ երեխաներիս բերեց այստեղ, և մենք Զատիկի տոնը նշեցինք. անտառի մամուռների մեջ մայսու մեջ համար ձու էր պահ տվել:

Այստեղ, դպրոցական արձակուրդների օրերին, զարմիկներիս հետ, ես մի ամրոց էի կառուցել, որը դեռ կիսով չափ կանգուն էր մնացել: Ամենուր երևում էին անցյալի հիշատակները, որոնց հեռու-հեռավոր հայելու միջից ինձ էր նայում մեջը, որ բոլորովին նման չեր իմ ներկայիս կերպարանքին... Միթե դա ես էի: Այնպես ուրախ ու ինքնագոր, այնպես երախտագետ ու ընկերական, այնպես շերմորեն կապված մորս հետ, զերծ ամենայն վախից, այնպես անհասկանալիորեն երջանիկ: Միթե դա ես էի: Եվ ինչպես կարող էի այդպես կերպափոխվել, դառնալ այնպիսին, ինչպիսին հիմա եմ, այսպես անձանաչելիորեն փոխված, բոլորովին ուրիշը դարձած, չարամիտ, վեհերոտ ու անսահման դժբախտ: Ամեն ինչ առաջվանն էր մնացել. անտառը և գետը, ձարխտուր ու ծաղիկները, ամրոցն ու մրջնաբույնը, և սակայն, այդ ամենն ասես թունավորված ու ամայացված լինեին: Միթե ետդարձի ոչ մի ճանապարհ չկար, վերադարձ դեպի այնտեղ, ուր մնացել էին երջանկությունն ու անմեղությունը: Միթե այլևս այնպես չի լինելու, ինչպես առաջ էր: Արդյոք, առաջվա պես անկաշկան ծիծաղելու եմ, արյուր, խաղալու եմ բույրերիս հետ, փնտրելու եմ պահ տված Զատիկի տոնի ձկերը:

Քրիստու ծակատիս ես վազում էի ու վազում, իսկ ետևից ընկած արշավում էր իմ մեղքը, ինձ շարունակ հետապնդում ու հալածում էր հորս ստվերը՝ հսկայաչափ ու ահարկու: Ես սուրում էի ծառուղիների ու բացատների միջով: Հասնելով մի բարձունքի՝ կանգ առա, ճանապարհոց դուրս եկա և սրտի սաստիկ ծակոցներով փովեցի խոտերի վրա: Այդ ծակոցներն հավանաբար երկար ժամանակ լեռնալանջերով վազվելու հետևանք էին, և ինձ թվաց, թե շուտով կանցնեն: Ցածում երևում էին քաղաքն ու գետը, մարմնամարզության դահիճը, ուր արդեն պարապ- մունքն ավարտվել էր, և տղաներն այս ու այն կողմ էին ցրվել, ես տեսնում էի հայրենական տան բարձուղիք տանիքը: Այնտեղ էր գտնվում հորս ննջասենյակը և այն դարակը, որտեղից անհետացել էին թօքերը: Այնտեղ էր նաև իմ փոքրիկ սենյակը: Եթե ես այնտեղ Վերադառնամ՝ ինձ դատաստան է սպասվում: Կոչ եթե չվերադառնամ...

Ես գիտեի, որ վերադառնալու եմ: Ամեն անգամ ինչ էլ լինե՞ր՝ վերադառնալ էի: Ամեն ինչ միշտ էլ այդպես էր ավարտվում: Ի՞նչ արած, հեռանալ չես կարող, ոչ կարող ես Աֆրիկա մեկնել, ոչ էլ՝ Բեռլին: Փոքր ես, ձեռքիդ դրամ չունեմ, ոչ ոք բեզզ չի օգնում: Այ թե բոլոր երեխաները կարողանային միավորվել ու իրար օգնեին... Նրանք շատ-շատ են, աշխարհում երեխաներն ավելի շատ են, քան ծնողները: Բայց բոլոր երեխաները ինձ պես գողեր ու հանցագործներ չեն: Խճածեները շատ ըիչ են: Գուցե ես միակն էի իմ տեսակի մեջ: Բայց ոչ, ես գիտեի, այնպիսի քաներ, ինչպիսիք ինձ հետ էին կատարվում, պատահում էին նաև ուրիշների հետ: Այ, օրինակ, իմ մի քեզին երեխա ժամանակ նովյանիս գողություն էր արել և շատ աղետներ էր բերել իր գլխին, այդ մասին ես մի անգամ տեղեկացա՞ գաղտնի ականջ դնելով ծնողներիս խոսակցությանը, այո, ծածով կերպով, քանի որ միայն այդպես կարող ես խմանալ ամենահետաքրքիր բաների մասին: Բայց դա եւ ինձ չի կարող միխթարել, և եթե ինքը՝ իմ այդ քեզին էլ այստեղ լիներ, նա ել չէր կարողանա ինձ միխթարել... Նա արդեն վաղուց ի վեր մեծահասակ էր դարձել, նա հիմա քահանա էր, և անպայման մեծերի կողմը կրոներ, նա ել ինձանից ձեռք կրաշեր: Նրանք բոլորն ել այդպիսին են: Մեր՝ երեխաներիս հանդեպ նրանք բոլորն ել ինչ-որ տեղ անկեղծ չեն և ստում են, ինչ-որ դեր են խաղում, այլ կերպարանքով են ներկայանում՝ ձևացնելով, թե ուրիշ են: Մայրիկը, թթես, բացառություն էր, կամ գուցե նրանցից ավելի պակաս չափով էր այդպիսին երևում:

Իսկ եթե տուն չվերադառնամ: Զք որ կարող էր ինչ-որ բան պատճառ
լինել, կարող էի վիզու կոտրել կամ խեղճել ջրում, կամ էլ գնացքի տակ
ընկնել: Այդ դեպքում ամեն ինչ ուրիշ կերպարանը կունենար: Այս ժամա-
նակ ինձ տուն կփոխադրեին, բոլորը սարսափահար ու լօնցայն կարտա-
յեին մրաս, կիսնջային ինձ, և թօքերի մասին խոսք էլ չեր լինի:

Ես լավ գիտեի, որ մարդու ընդունակ է իրեն կյանքից զրկելու: Ստածում էի, որ երբեւ, հավանաբար, այդ օրն էլ է գալու, թիվ ավելի ուշ, երբ

որ ամեն ինչ անտանելիորեն գարշելի դառնա: Ավելի լավ չե՞ր լինի, եթե հիվանդանայի, բայց ոչ թե հասարակ հազո՞ղ-փոշոցով, այլ իսկապես, անկողին ընկնելու աստիճան մահացու հիվանդանայի, այնպես, ինչպես այն անգամ, եթե քութեշով էի տառապում:

Այսպես թե այնպես մարմնամարզության դասը վաղուց արդեն ավարտվել էր, և անցել էր այն ժամանակը, երբ ինձ տանը սպասում էին սուրբի սեղանի մոտ: Գուցե նրանք հիմա կանչում-փնտրում են ինձ, որոնում են իմ սենյակում, պարտեզում, բակում, ձեղնահարկում: Իսկ եթե հայրս արդեն բացահայտել էր գողությանս փաստը, այնժամ, հավանաբար, ինձ այլևս չէին էլ փնտրում, չե՞նա արդեն կիմանար եղածի մասին:

Ես այլև անկարող էի պառկած մնալ: Ճակատագիրն ինձ չէր մոռա-
նում, նա կրնկակոյ հետապնդում էր ինձ: Ես վերսկսեցի իմ վազքը: Սուրալով անցա պուրակի նստարանի մոտով, որի հետ կապված ևս մի հուշ ունեի: Դա վաղող էր, մի շատ գեղեցիկ ու թանկագին հիշողություն, որն այժմ կրակի պես այրում էր ինձ: Հայրիկս ինձ մի գրչահատ դանակ էր նվիրել, մենք միասին ուրախ ու խաղաղ գրունում էինք, նա նստեց այս նստարանին, իսկ ես մտա թփուտների մեջ՝ ինձ համար մահակ կորելու նպատակով: Եվ այստեղ, ուրախության ու խանդավառության պողոքումի մեջ, փշացրեցի նոր դանակը՝ հենց ուղղակի կորի մասից կոտրելով շեղբը, և սարսափահար ետ վերադարձա՝ վճռած լինելով թաքցնել եղելությունը, բայց հայրս խկույն հարցուց, թե նվերը ի՞ն չեմ փշացրել: Ես անչափ նդրախտ էի ն դանակի պատճառով, ն այն բանի համար, որ հանդիմա-
նությունների էի սպասում: Բայց հայրս սոսկ ժպտաց, կամացով թըփ-
թըփացրեց ուսիս և ասաց. «Խեղճ տղա, հազար ափսոս...»: Խնչքան էի ես
նրան սիրում այդ պահին, որքան անգամներ ես իմ մեջ ներդություն էի
խնդրում նրանից... Հիմա էլ, եթի միտքս էր գալիս հորս այն ժամանակավա-
հայացքը, նրա ձայնը, նրա կարեկցական ժպիտը... Մնչ սրիկան էի ես, որ
այդքան անգամներ դառնացրել ու խաբել, իսկ այսօր էլ, ահա, կողոպտել
էի այդպիսի հրաշալի հորը...

Երբ քաղաք Վերադարձա և անցնում էի մեր տանից ոչ հեռու ընկած կամրջի մոտով՝ արդեն սկսել էր Երեկոյանալ: Խանութի մոտ, որի ապակե դրան ետևում արդեն լուս էր Վառվում, մի տղա մոտ վազեց և, անսպասելիորեն կանգ առնելով, իմ անոննը տվեց: Օսկար Վեբերն էր: Ավելի հարմար ժամանակ չէր կարող ուսատ գալ: Սակայն ես նրանից իմացա, որ մարմնամարդության ուսուցիչը չէր նկատել իմ բացակայությունը:

— Բայց որտե՞ղ էիր դու, — հարցող նա:

— Դե, ոչ մի տեղ էլ չեի, — ասացի ես, — պարզապես ինձ լավ չեի գցում:

Խոստովանելով, որ խոսելու տրամադրություն չունեմ՝ որոշեցի հեռաւալ, քայլ որոշ ժամանակ անց, որն ինձ ցավալիորեն երկար թվաց,

Վերերը երևի նկատեց, որ իրոք Խրամադրություն չունեմ իր հետ խոսելու և դրանից շարացավ:

— Դե, հանգիստ թող ինձ, — սառը ասացի ես, — Ես մենակ էլ տուն կիասնեմ:

— Ահա թե ինչ, — բացականչեց նա, — կարծում ես Ես տրամադրություն ունեմ թեզին զրուցելու, հիմարի մեկը: Ես բոլ լակոտը չեմ, նկատի ունեցիր: Բայց նախ ուզում եմ իմանալ, ինչ նորություն կա մեր ինայատությից: Ես այստեղ մի տասանց ունեմ, իսկ դու, կարծեմ, դեռ ոչինչ վրան չես ավելացրել:

— Կարող ես բոլ դրամը ես վերցնել, հենց թեկուզ այսօր, եթե վախենում ես, թե կյուրացնեմ: Միայն թե գլուխս մի տար: Շատ էլ պետք են քո կոպեկները:

— Թե չէ իմ «կոպեկները» վերադարձնելով ինձ մեծ սիրահրություն արած կիլիսես, — ասաց նա ծաղրական տոնով, բայց նաև մի ճեղք թողնելով հաշոտթյան գալու համար:

Ես սակայն դրանից ավելի տաքացաց ու կատաղեցի, իմ մեջ կուտակված բոլոր սարսափազդու մտապատկերներն ու շվարածության գգացումը վերածվեցին. մի չտեսնված վայրի չարամտության: Վերերը չկարողացավ ծպտուն իսկ հանել... նրա առաջ ես արդար էի, խիդաս էլ մաքուր: Ինձ ծպտուն իսկ հանել... նրա առաջ ես ինձ լավ գգայի և գլուխս չխոնարհեի: հարկավոր էր մեկը, որի առաջ ես ինձ լավ գգայի և գլուխս չխոնարհեի: Իմ մեջ բույն դրած բոլոր խառնիճաղանց, դավաճան ու մռայլ մտքերը դուրս ժայթթեցին այդ փրկարար լուսանցի մեջ: Հկարողացաց ատելությունս զապել այն մարդու նկատմամբ, որից մշտապես զգուշությամբ խուսափում էի, և պարոնորդու տեսք ընդունելով՝ դիմացինս հասկացրի, որ ինձ համար մեծ կորուստ չէ մի փողոցային տղայի հետ ունեցած բարեկամությունից հրաժարվելը: Ասացի, որ այլևս նա մեր պարտեզնում հատապտուներ չի ուտի, իմ խաղալիքներով չի խաղա, այդ ամենին վերջ: Ինձ թվաց, թե ես նորից փթթում ու հարություն եմ առնում. այժմ ես մի թշնամի ունեցա, մի հակառակոր, մեկը, որ մեղավոր էր իմ առաջ, որի ձեռքը կարելի էր բռնել: Բոլոր իմ կենսական պոռթկումները հավաքագրություն այդ փրկարար, տեսչալի ու ազատարար մոլուցի մեջ, այն դաժան ուրախության մեջ, որ վերջապես թշնամի ունեմ, որին այս անգամ արդեն ոչ թե իմ մեջ էր ապրում, այլ կանգնած էր իմ դեմ-հանդիման, և նայում էր ինձ նախ տարակուսած, ապա և չար աչքերով, մի թշնամի, որի ձայնը ես լսու էի, որի հանդիմանություններին կարող էի ուշք չդարձնել, հայիոյանքներին՝ տասնապատիկ ավելի վատ բառերով պատասխանել:

Իրար գիշի լուսանքներ տեղալով՝ մենք ուս-ուսի տված ցած էինք իշնում երեկոյացող փողոցով: Այս ու այնտեղից, տների դուռ-լուսամուտներից մարդիկ մեր կողմն էին նայում: Իմ դեմ ուղղված հոգուս ողջ չարությունն ու ատելությունը թափկեցին խեղ Վերերի գլխին: Երբ նա շարությունը ինձ վախեցնել, թե մարմանամարզության ուսուցչին ամեն ինչ փորձեց ինձ վախեցնել, թե մարմանամարզության ստացա. չէ որ նրա այդ արարը կասի՝ ես միայն մեծ բավականություն ստացա. Են որ նրա այդ արարը ստորություն կիլիսեր, զագրելի մի բան, դրանով նա ինձ ավելի էր զրեղացնում:

Երբ Մսագործների փողոցի անկյունում մենք ձեռքերիս կատարյալ ազատություն տվեցինք, մի քանի անցրողներ կանգ առան և սկսեցին ուշի-ուշով հետևել մեր տուրությմիփոցին: Մենք անխնա հարվածում էինք միմյանց որովայնին, դժմքին, մեկս մյուսի ոտքը կոխվուտում: Այդ պահին ես ամեն ինչ մոռացել էի, իմ կոհվն արդար էր, և ես այլևս ինձ հանցագործ չէի համարում, մեծ հաճույք էի ստանում ծեծկոտությոց, և, թեև Վերերը ինձանից ավելի ուժեղ էր, փոխառնեց ես նրանից ավելի ճարպիկ էի ու խորամանկ, ավելի փութաջան ու մոլեգին: Մենք տաքացել էինք և ավելի ու ավելի կատաղած էինք կոհվ տալիս: Երբ նա հուսահուռության միջոցին պատօնեց իմ վերնաշապիկի օձիքը՝ ես գգացի, թե սառն օդի ալիքը ինչպես անցավ ջղագրիոն մաշկիս վրայով:

Մենք շարունակում էինք իրար անխնա հարվածել, զգեստներն էինք պատառուտում, ծեծկոտվում ու միմյանց խոշտանգում, վիրավորանքներ ու լուսանքներ էինք թափում իրարու վրա, մեր հայիոյանքներն ավելի ու ավելի կրքու ու անպատշաճ էին դառնում, ուղեկցվում չարամիտ արտահայտություններով, ավելի ու ավելի բանաստեղծական ու գերբնական գունավորում էին ստանում: Այստեղ էլ ես նրան գերազանցում էի, ավելի ծանր հայիոյանքներ էի շարուու նրա երեսին, շատ ավելի գեղարվեստական, հորի ու ոչնչացնողու: «Ճուն», ասում էր նա ինձ, իսկ ես նրան պատասխանում էի՝ «շան ձագ»: «Սրիկա», նետում էր նա, ես ի պատասխան ճուու էի՝ «հրեց»: Երկուս էլ, առանց այդ բանը նկատելու, արյունվագ էինք եղել, մենք փոխնիփոխ անեծքներ ու լուսանքներ էինք թափում միմյանց երեսի, իրար գլուխս կտրելուցանկություն հայտնում, ափսոսում, որ ձեռներումս դանակներ չկային, որպեսզի յիշենք միմյանց կողերի մեջ և այնտեղ մի լավ խառնչտեինք, մենք հայիոյանք էինք իրար, միմյանց ծագումը, ծնողներին:

Առաջին և վերջին անգամն էի ես այսպես ամբողջ կրուզ մինչև վերջ կոփվ տալու մարմածն ունենում, հարվածում էի ինչպես պատահեր, ամենայն դաժանությամբ, խտրություն չդնելով հայիոյանքներին մեջ: Ես բազմից ականատես էի եղել այսպիսի ծեծկոտությունների, մեծ բավականությամբ ու սարսափի զգացումով ունկնդրել այդորինակ կոպիտ, նախնադարու բուրող հանդիմանություններն ու հայիոյանքները: Հիմա ես ինքս էի այդ նոյն հայիոյանքները բղավում, ասես փոքրուց ստվոր էի դրան և հաձախ էի գործածում: Աչքերից արցունքներ էին հոսում, բերանից՝ արյուն: Բայց աշխարհը սքանչելի էր, այն իմաստ էր ձեռք բերել, ապրելո հրաշալի էր թվում, հրաշալի էր ծեծկոտվելը, հրաշալի էր ուրիշի և սեփական արյունը թթելը:

Երբեք ինձ չի հաջողվել մտովի վերիիշել այդ մարտի վախճանը: Որոշ ժամանակ անց այն ավարտվեց, ես ինձ գտա խաղալված մթության մեջ, բայլում էի ծանոթ փողոցներով, տների մոտով, հետո հանկարծ հայտնեցին մեր տան մոտակայքում: Հարբածությունը կամաց-կամաց ցընդեց-անցավ, մկաններիս դողոն ու ականջներիս միջի աղմուկ-աղաղակը դադարեցին, և իրականությունը մաս առ մաս պարզեց իմ առաջ, սկզ-

բում, սակայն, սոսկ աչքերիս առաջ: Այս ջրհորը, կամուրջը, ձեռքից դորացող արյունը, պատառութված շորեր, կախ ընկած գուլպաներ, ծնկիս մեջ ու աչքերում ցավ, գլխարկս չկա... Այսպիս բոլոր մանրամասները կամաց-կամաց իրենց հիշեցնել էին տալիս, դառնում էին իրականություն և ինձ էին հասցեագրված: Հանկարծ խորը հոգնությունն ինձ պաշարեց, զգացի, որ ծունկու ու ձեռքերս դողում են, ապա շոշափելով մի կերպ գտա մոտակա պատը:

Դա իենց մեր տան պատն էր: Փառք աստծո... Այս աշխարհում ես այլևս ոչինչ չեմ հասկանում, գիտեմ միայն, որ այստեղ ապաստարան էր, խաղաղություն, լույս, անվտանգություն: Թեթևացած շունչ քաշելով՝ ես իրեցի բարձրադիր դուռը:

Քարերի բույրի ու խոնավ սառնության հետ միասին անսպասելիորեն ինձ այցելեցին հազարան ու հազարերանգ հիշողությունները: Աստված իմ: Այստեղ ամեն ինչ բուրում էր խստությամբ, օրենքով, պատասխանատվությամբ, հայր կոչվածով և աստծով: Ես գողություն էի արել: Ես պատերազմի դաշտից վերադառն վիրավոր հերոս չեմ և ոչ էլ՝ մոլորված երեխա, որ տուն վերադառնալով՝ մոր մոտ ջերմություն ու կարեկցանք է գտնում: Ես գոր էի, հանցագործ: Այստեղ, վերևում, ինձ ոչ ապաստարանն էր դիմավորելու, ոչ անկողինն ու բռնը, ոչ սնունդն ու խնամքը, ոչ էլ միխթարությունն ու ներումը: Այստեղ ինձ դիմավորելու էին հանցանքն ու պատիժը:

Այն ժամանակ, երեկոյի խավար միջանցքով անցնելիս, դժվարությամբ ու մեծ տառապանքների գնով մեկ առ մեկ աստիճանները հաղթահարելով, իմ ողջ կյանքի ընթացքում ինձ առաջին անգամ բախտ վիճակվեց մի պահ միայն լիաթոք շնչել սառը եթերը, միայնությունն ու ճակատագիրը: Ես ոչ մի ելք չեմ տեսնում, ոչ ծրագրեր ունեմ, ոչ էլ վախ էի գգում, ինձ պաշարել էր սոսկ սառնության ու դաժանության տրամադրությունը. «Այստեղ էլ պատը է»: Հենվելով բազորիին՝ մի կերպ վերև բարձրացած: Հայտնվելով պապկե դռան առջև՝ իմ մեջ ցանկությունն առաջացավ նստել սանդուղքի վրա, շունչու տեղը բերել, հանգստանալ: Բայց դա էլ չարեցի, պարզապես իմաստ չեմ տեսնում: Պետք էր ներս մտնել: Դուքը բացելիս՝ ցանկացած իմանալ, թե ժամը քանիսն էր:

Մտա ճաշասենյակ: Նրանք նստած էին սեղանի շուրջը, հենց նոր ավարտել էին ընթրիքը, ինձորներով լիբը ափսեն դեռ սեղանի վրա էր: Ժամը ուրիշ մոտ էր: Առանց թույլտվության ես երբեք այսքան ուշ տուն չեմ վերադարձել, երբեք չեմ ուշացել ընթրիքից:

«Փառք աստծո, վերջապես բարեհաճեցիր», — աշխուժանալով բացականչեց մայրս: Ես զգացի, որ նա անհանգստացել էր ուշանալու պատճառով: Նա շտաբեց իմ կողմը, բայց արյունոտ դեմքս, կեղծոտ ու պատառութված շորերս տեսնելով՝ սարսափահար ընկրկեց: Ես ոչինչ չառացի, աշխատում էի ոչ ոքի չնայել, բայց պարզորչ գգում էի, որ հորս ու մորս հայացըներս իմ վրա էին սեռված: Հայրս իրեն մի կերպ

զապելով՝ լորում էր: Ես զգում էի, թե նա ինչքան էր զայրացած: Մայրս ինձ իր մոտ առավ, լվաց դեմքս ու ձեռքերս, վիրակապեր դրեց, կերակրեց: Կարեկցանքն ու հոգատարությունը շրջապատեցին ինձ, ես նստել էի լուս ու ամոթիսած, խոճի խայր էի զգում ինձ շրջապատող ջերմության մթնոլորտում: Հետո ինձ համար անկողին գցեցին: Առանց հորս դեմքին նայելու՝ ես նրան հրաժեշտ տվի:

Երբ արդեն անկողնում էի՝ մայրս ինձ մոտ եկավ: Նա վերցրեց աթոռին գցած հագուստներս և տեղը ուրիշները դրեց, քանի որ վաղը կիրակի էր: Հետո նա զգուշությամբ սկսեց ինձ հարցուվորձ անել, և ես ճարահատյալ պատմեցի տեղի ունեցած ծեծկոտությ մասին: Թեև նա եղելությունը զազրելի համարեց, բայց և չհանդիմանեց ինձ, և նովսիսկ փոքր-ինչ զարմացավ, որ ես այդ աստիճան վախեցած ու ճնշված էի այդ պատահարի պատճառով: Հետո նա դուրս եկավ:

Այմի գոնե, մտածում էի ես, նա համոզվեց, որ ամեն ինչ կարգին էր: Ես ձեռնակիրկ էի տվել ու արյան մեջ կորել, բայց վաղն արդեն ամեն ինչ կմոռացվի: Իսկ իսկական պատճառի մասին մայրս ոչինչ չգիտեր: Նա անհանգստ էր ու տխուր, բայց իմ նկատմամբ մեղմ ու փաղաքուշ էր վերաբերվում: Կնշանակի հայրս էլ, ըստ երևությին, դեռ ոչինչ չգիտեր:

Այս հենց այդ պահին ինձ հուսահատության մի սարսափելի զգացում համակեց: Ես հասկացա, որ այն պահից, երբ ես ոտք դրեցի մեր տուն, ինձ համակել էր մեն-միակ, եղակի, կրծոտ ու ամենակուլ մի ցանկություն: Ուրիշ ոչ մի բանի մասին ես չեմ մտածում, ոչինչ չեմ տեսնում, ոչնչի մասին չեմ թախծում, ես միայն մի ցանկություն ունեմ. Թող փոթորիկը պայթեր, թող դասը տեղի ունենար և թող վերջ դրվեր նկատմամբ ունեցած վախի զգացումիս: Ես ամեն ինչ սպասում էի և պատրաստ էի ամեն ինչի: Թող ինձ խստորեն պատժեն, ծեծեն, կալանավորեն... Թող նա ինձ սովորնի.... Թող հայիօյի ու դուրս անի տանից... Միայն թե վերջ տրվի վախին ու սպասմանը...

Մինչդեռ ես պառկած էի անկողնում՝ շրջապատված փաղաքանքով, սիրով ու հոգատար վերաբերմունքով, ինձ խնայել էին, պատասխանատվության չեին կանչել իմ չար արարտների համար, և ես դեռ պետք է նորից ու նորից սպասեի ու վախենայի: Նրանք ներեցին ինձ պատառութված զգեստների, երկար բացակայության, ընթրիքից ուշանալու համար, որովհետև ես հոգնած-զարդված էի, արյան մեջ կորած, և նրանք խղճացին ինձ, բայց գլխավորապես երկի այն պատճառով, որ մնացած մասին գաղափար չունեին, քանի որ նրանք տեղյակ էին միայն իմ զանցաների, բայց ոչ իմ կատարած հանցագործության մասին: Ես կրկնակի անգամ այնու թշվառ վիճակում կիայտնվեմ, երբ ամեն ինչ բացահայտվի... Գուցե ինձ կուղարկեին, ինչպես մեկ անգամ արդեն սպառնացել էին, ուղղիշ տուն, որտեղ մարդուս ստիպում են չոր հաց ուտել, իսկ մնացած ազատ ժամանակը փայտ կտորել ու կոշիկ մաքրել:

Այստեղ միայն ընդարձակ ննջասրահներ են՝ վերակացուների հսկողության ներք, որոնք փայլով ծեծում են իրենց ենթակա տղաներին, և առավոտյան ժամը չորսին արթնացնում՝ սառը ջուր ցողելով նրանց վրա: Գուցե ինձ ոստիկանություն կիանձնեն:

Ինչ էլ լիներ, միննույն է, այսպես թե այնպես սպասողական վիճակը ինձ չեր լրելու: Այսուհետև էլ ստիպված էլ լինելու ապրել՝ սարսափի զգացումը մեջս ամբարձ, մեն-մենակ իմ գաղտնիքի դեմ-հանդիման, դողդողալով ամեն հայացքից, ամեն ոտնաձայնից, չհամարձակվելով նայել ոչ ոքի աչեթի մեջ:

Գուցե հնարավոր էր նաև, որ իմ գողությունը այդպես էլ աննկատ անցներ: Ուրեմն ամեն ինչ նոյնըն էր մնալու: Ուրեմն ես զոր եմ կրում այս ողջ սարսափն ու ցավերը... Օ՛, եթե միայն այդպես լիներ, եթե միայն այդ անմտածելի հրաշքը հնարավոր լիներ՝ այսժամ ես բոլորվին այլ կերպ կսկսեի ապրել, իմ երախտագիտությունը կիայտնեի աստծուն և կապացուցեի նրան, որ կարող եմ մաքրու ու անարատ կյանքով ապրել... Այս, ինչը ես առաջներուա էլ փորձել էլ անել, բայց որն ինձ չեր հաջողվել, այժմ հաստատապես հաջողվելու է, հիմա կամքս կրավի, հիմա քաջություն կունենամ, գոնե հիմա՝ նման տառապանքներ ու դժոխային տանջանքներ կրելուց հետո... Իմ ողջ էռլոյունը ամբողջապես ներծծված էր այդ ցանկությամբ: Միշիթարությունը ասձրկի պես թափկեց երկնքից, ապագան պատկերացավ ինձ կապույտի ու արևի ոսկու մեջ թաթախված գույներով: Այդ տեսիլապատկերների մեջ ես վերջիվերջո՞ բուն մտա ու թեթև հոգով նշեցի մի ամբողջ գիշեր:

Առավոտյան արդեն կիրակի էր, և դեռևս անկողնում պառկած՝ զգացի, ինչպես մրգի համն ես գգում, կիրակի օրվա այն խիստ յուրահատուկ, զարմանալիորեն բազմահամ, ամբողջության մեջ սակայն այնպես հրաշալի համը, որի հետ ես ծանոր էլ այն ժամանակվանից, երբ սկսեցի դպրոց հաճախել: Կիրակնօրյա առավոտը հրաշալիք էր. կարելի էր պառկել անկողնում, դպրոց չկար, առաջիկայում համեղ նախաճաշ էր նախատեսվում, ողջ չեր բոլոր ուսուցիչներով ու թանաքով, անսահման ազատ ժամանակ... Գլխավորը այդ էր: Շատ ավելի թույլ էին հնչում մյուս՝ օտարություն ու ձանձրալի հնչուները. Եկեղեցն ու կիրակնօրյա դպրոցը, ընտանեկան գրոսանքը, տոնական օրվան պատշաճ կերպով հագնելու հնարական գրոսանքը, տոնական օրվան պատշաճ կերպով հագնելու հոգոսը: Նման բաներից օրվա այդ մաքրուր, հաճելի ու հոյակա համն ու հոգոսը: Նման բաներից օրվա այդ մաքրուր, հաճելի ու հոյակա համն ու հոգոսը: Երբ որ հոտը թիշ աղավաղություն ու փշանում էին, — այնպես լինում էր, երբ որ միաժամանակ մատուցվող երկու կերակրատեսակները, օրինակ՝ պուդին-կամամանակի մատուցվող երկու կերակրատեսակները, օրինակ՝ պուդին-կամ կերոսինի համ էր գալիս: Դու դրանք հաճույքով ուսում ես, բայց նրանց համին ամբողջությունն է պակասում, փայլը, ինչ արած՝ սուլաված նրանց համակերպությունը էլ այնքան էլ իրար չէին պատշաճում, կամ կերոսինի համ էր գալիս: Դու դրանք հաճույքով ուսում ես, բայց նրանց համին ամբողջությունն է պակասում, փայլը, ինչ արած՝ սուլաված

նօրյա դպրոց հաճախել, ինչը, սակայն, բարեբախտաբար, ամեն կիրակի չէ, որ վիճակվում էր: Ազատ օրը այդ տեսակետից մի տեսակ պարտականության ու ձանձրույթի հավելյալ համ էր ձեռք բերու: Ընտանյոր հանդերձ գրոսանքի դրուս գալիս էլ, նույնիսկ եթե այն հետաքրքիր էր անցնում, սովորաբար միշտ էլ ինչ-որ մի անախորդ դեպք էր պատահում. մեկ քոյլերից հետ էիր կափ տալիս, մեկ շատ արած կամ էլ շատ դանդաղ էր քայլում, կամ հարմարեցնում էր հագուստու խեժով կեղսուտել, մի խոսքով տիհած երևույթներից խուսափել չեր լինում:

Ի՞նչ արած, թող այդպես լինի: Ես ինձ լավ էի զգում: Երեկվանից մի ողջ հավիտենություն էր անցել: Ես չէի կարողանում մոռանալ իմ նողկալի արարքը, առավոտը բացվելուն պես այն նորից միտքը ընկավ, բայց արդեն այնքան ժամանակ էր դրանից անցել, սարսափները տեղի էին տվել ու դարձել անիրական: Երեկ ես լիովին բավեցի իմ մեղքը, դրա համար խոճի խայլոցներ ունեցա, գարշելի ու չարագույց օր անցկացրեցի: Այժմ նորից տրվել էլ ինքնավաստակ սրափության ու միամիտ կենսասիրությանը և շատ բաների մասին այլևս չէի մտածում: Լիակատար հոգեկան անդորրը, իհարկե, դեռ չէի վերստացել, վտանգի և տիհաճության զգացումը մնացել էր՝ նման բոլոր այն մանր-մունը պարտականություններին ու դժկամությունն արդուցող մանրութերին, որոնք որոշ չափով պղտորում էին հրաշափառ կիրակին:

Նախաճաշին բոլոր մեզ լավ էինք զգում: Եկեղեցի թե կիրակնօրյա դպրոց գնալու ընտրությունը թողնվեց իմ հայեցողությանը: Ես, ինչպես միշտ, նախընտրեցի Եկեղեցին: Այստեղ գոնե հանգիստ էին թողնում, և կարող էր ազատ տրվել քո մտքերին: Բացի այդ՝ ծաղկազարդ պատուհաններով ու հանդիսավոր տոնակատարության տրամադրող պատերը գեղեցիկ ու վեհաշուր մթնոլորտ էին ստեղծում, և երբ աչեթոր կլոցած, թիշ մթամած ու երկարաձիգ կոպերի տակով նայում էր երգեհոնին՝ երբեմն քո առաջ զարմանահրաց պատկերներ էին հառնում, խավարի միշտ երկանկող երգեհոնի փողերը հարյուրավոր աշտարակներով հուրիբառող քաղաք էին հիշեցնում: Բացի այդ, երբ Եկեղեցու այցելուները փոքրաթիվ էին լինում, ինձ հաճախ հաջողվում էր, առանց շրջապատից կտրվելու, ժամանակ առ ժամանակ հետաքրքրական պատմություններ ընթերցել:

Այսօր ես հետս գիրք չվերցրեցի, բայց և միտք էլ չունեի հարմար պահին ծկելու Եկեղեցուց, մի բան, որ ինձ հետ քանից պատահել էր: Երեկվա երեկոն մտքից չեր հեռանում, իյոր որ իմ հոգին լիբն էր բարի ու նվիրական մղումներով, և ես ազնվարք ուզում էի հաշտ ու խաղաղ պարել աստծո, ծնողներին ու աշխարհի հետ: Օսկար Վերեբի նկատմամբ ունեցած իմ կատաղությունը նույնպես ամբողջովին մարել էր: Եթե այժմ նրան հանդիպեի, ապա ամենաշերմ կերպով պիտի ողջագործեի:

Պատարագն սկսվեց, ես էլ սկսեցի օրիներգի տողերը հագներգել, դա «Հովհաննես»-ի մեղեդին էր, որը մենք դեռ դպրոցում էինք սերտել:

Մի պահ նկատեցի, թե ինչպես երգեցողության ժամանակ, առավել ևս մեղմանվագ ու ծորուն եկեղեցական երգեցողության ժամանակ, բանաստեղծական տունը բոլորովին նոր իմաստ էր ձեռք բերում, քան որ ընթերցելիս էր կամ անգիր արտասանելիս: Ըսթերցանության ժամանակ տողն ասես մի ամբողջություն լիներ, ուներ իր ինքնուրույն իմաստը, կազմված էր նախադասուրոյւններից: Երգեցողության ժամանակ, սակայն, այն կարծես սոսկ առանձին բառերից բաղկացած լիներ, նախադասություններ կարծես չկազմվեին, տողն ասես իմաստ չունենար, փոխարենը, սակայն, առանձին արտահայտությունները, մեղեղուն զուգահեռ վանկարկող տարաձիգ բառերն ասես մի տեսակ զարմանալիորեն գերհցողոր: Անկախ լյանք ունենային, հաճախ նույնիկ առանձին վանկերն ու հնչյուններն եւ, որ ինքնին կատարելապես անհմաստ էին, երգեցողության ժամանակ ինչ-որ ինքնուրոյւնություն ու ավարտուն կերպարանք էին ձեռք բերում: Օրինակի համար՝ «Հովիկ դոր ոչխարաց, անխոնց, հսկող արթմին, որ քնի մասին անգետ ես խսպառ» տողում եկեղեցում երգելիս ոչ կապ կար, ոչ իմաստ, երգելիս ոչ հովիկ մասին էիր մտածում, ոչ եւ ոչխարների, և առհասարակ ոչնչի մասին չէիր մտածում: Բայց դրանից բոլորովին էլ ձանձրությ չէիր գգում: Առանձին բառեր, հատկապես «արթօմ-նի»-ն, այնպես արտասովոր գեղեցիկ ու ամբողջական էին հնչում, որ հոգիով զմայլվում էր լիովի, իսկ «հսպառ»-ը այնպես խորհրդավոր ու ծանր էր արտաբերվում, որ կարծես ինչ-որ «սպանդ»-ի մասին հիշեցներ, ինչ-որ խավարամած, խորհրդավոր ու կիսածանոթ երևույթների մասին, որոնք ապրում էին մարդում մեջ, նրա հոգու խորհրդում: Եվ իհարկե, նաև երգեինը...»

Այսուհետև հերթը հասավ քաղաքային քահանային ու նրա քարոզին, որը միշտ էլ անտանելիորեն երկար էր լինում, և ամբողջովին կլանված այն ունկնդրելով՝ մերթ ուշադրությունն սեղում էիր արտասանողի ձայնի զանգակատան հնչյուններն հիշեցնող ելեջումներին, մերթ էլ անակնկալ կերպով պարզորոշ ընկալում առանձին բառերն իրենց իմաստների հետ միասին, միաժամանակ ձգտելով հնարավորին չափ երկարաձգել դատողությունների թելը: Այս, երանի թե ինձ հաջողվեր տեղ զբաղեցնել եկեղեցու քնի առաջ և ոչ թե երգչախմբում՝ տղամարդկանց քամության մեջ: Բեմի առաջամասում, ուր ես մի քանի անգամ բախտ եմ ունեցել տեղ գրավել եկեղեցական համերգների ժամանակ, կարելի է հանգիստ նստել ծանր ու մեկուսացված բազկաթոռների վրա, որոնցից յուրաքանչյուրը մի-մի փոքրիկ ամրոց էր հիշեցնում, իսկ գլխավերնումդ ծավալվում էր զարմանալիորեն հոյակապ, բազմածալ ու ցանցկեն երկնակամարը, ավելի բարձրում՝ պատի վրա, նուրբ գույներով պատկերված էր լեռն քարոզից մի տեսարան, իսկ բաց մանուշակագույն երկնքի խորում պատկերազարդված Փրկչի կապույտ ու կարմիր զգեստների տեսքը համակում էր թեզ նուրբ ու երջանկավետ, հոգեպարար մի զգացում:

Լինում էին պահեր, երբ եկեղեցու ճռճռացող նստարանների նկատմամբ ես խորին զգվանք էի տածում, որպիշես դրանք ներկված էին դեղնավուն ու մոայլագովյն արծնափայլ ներկերով, որ միշտ հագուստից էին կպչում: Երբեմն էլ ճանձեր թզալով խփվում էին պատուհաններին, որոնց շրջանակների վրա կապտակարմրավուն ծաղիկներ ու կանաչ աստղեր էին նկարված: Եվ ահա անսպասելիորեն քարոզն ավարտվեց, ես առաջ թերվեցի, որպեսզի տեսնեմ, թե ինչպես է քարոզիչ քահանան անհետանում խավար ու նեղ սանդուղքների եւտում: Բոլորը նորից սկսեցին երգել՝ հոգեպես թերևացած ու բարձրաձայն, հետո ոտքի կանգնեցին ու շարժվեցին դեպի մուտքը: Հետո վերցրած հինգանցը նետեցի զոհաբերությունների համար նախատեսված անոթի մեջ, որի երկաթահունչ զնոցը չէր պատշաճում այս ողջ հանդիսավորությանը, և մարդկային հոսանքի հետ ես ուղղվեցի դեպի շքամուտքը ու դուրս եկա փողոց:

Ահա և վրա հասավ կիրակի օրվա լավագույն պահը, դա եկեղեցու երկֆամյա այցելության և ճաշի միշտ ընկած ժամանակահատվածն էր: Դու քո պարտականությունը կատարել էիր, երկար նստելուց հետո թեզ շարժվել էր պետք, խաղալու կամ զբոսնելու, կամ մի լավ գիրը կարդալու ծարավ էիր մեջու զգում, մինչև ճաշը կատարելապես ազատ էիր, իսկ ճաշին սովորաբար համեղ բաներ էին մատուցվում: Այդ մտքերից զմայլված՝ քայլեցի դեպի տուն, լիբը հոգեպարար մտածություններով ու զգացումներով: Աշխարհի հետ արդեն հաշովել էի, ապրել կարելի էր: Հանգիստ քայլելով անցա հյուրասենյակի միջով և աստիճաններով վերև բարձրացաւ:

Իմ սենյակում շողողում էր արևը: Ես ստուգեցի թրթուրներին հավաքածուն, որի մասին երեկ բոլորովին մոռացել էի, մի զոյգ նոր տիկնիկներ հայտնաբերեցի, բույսերը ջրեցի թարմ ջրով:

Այդ պահին դուռը բացվեց:

Ես դա միանգամից չնկատեցի: Մի րոպէ անց լուսաթյունն ինձ տարօրինակ կերպով ծանը ու ճնշիչ թվաց: Ես ես շրջվեցի: Դիմաց կանգնած էր հայրս: Նա գունատ ու տանջքած տեսք ուներ: Ողջույնի խոսքերը խրցեցին-մնացին կոկորդում: Խսկոյն նկատեցի. Նա ամեն ինչ գիտեր... Նա իր ոտքով էր եկել: Դատը վկավեց: Կաշանակի ոչինչ էլ չէր հարթվել, քավում տեղի չէր ունեցել, ոչինչ չէր մոռացվել... Արևը խավարեց, և կիրակնօրյա առավոտը մթնեց նրա հետ միասին:

Ես սեղուն նայում էի հորս ուղղությամբ՝ ասես երկնքից գահավիժած մեկին: Ես ասում էի նրան. ինչո՞ւ երեկ չեկավ: Այսօր ոչ մի բանի նախապարաստված չէի, դա ինձ համար անակնկալ էր, անսպասելի, ոչ զղալու էի պատրաստ, ոչ էլ՝ մեղքս ընդունելու... Շեմ հասկանում, նրա ինչին էր պետք իր մոտ՝ վերևում, պահարանի մեջ այդքան:

Նա մոտեցավ գրապահարանիս, ձեռքը խորեց գրեթի ետև և մի քանի թուզ դուրս կորցեց: Հավանաբար, հենց այդքան էլ մնացել էր:

Համբ ու ճնշիչ հարցական հայացքով նա իմ կողմն էր նայում: Ես չկարողաց ոչինչ ասել: Յավն ու համառությունը խեղդում էին ինձ:

— Ինչ կա,— խոսեցի ես վերջապես:

— Որտեղից թեզ այս թգերը,— հարցրեց նա զուսպ ու ցածր ձայնով, որն ինձ ատելու չափ անունելի էր:

Ես միանգամից սկսեցի խոտել: Ստել: Ասացի, թե իբր այդ թգերը հրուշակավաճառի մոտից եմ գնել, մի ամբողջ տուփ կլիներ: Իսկ որտեղից ինձ այդքան փող: Դրամը վերցրել էի խնայատուփից, որը ես պահում եմ ընկերոց հետ: Մենք երկուսով այնտեղ էինք պահ տալիս բոլոր այն մանրադրամները, որ ժամանակ առ ժամանակ ձեռքներս էին ընկնում: Ի դեպ՝ ահա այդ խնայատուփը: Ես ցույց տվեցի ճեղքավածքով տուփը: Այնտեղ այժմ միայն մի տասանոց էր մնացել հենց այն պատճառով, որ մնացած դրամով երեք թուր էինք գնել:

Հայրու լուս էր զուսպ ու խաղաղ հայացքով, որին ես հավատ չէի ընծայում:

— Իսկ ինչ արժեր քո այդ թուրը, — ցածրաձայն հարցրեց նա:

— Մեկ մարկ և վաթուու փինենինիզ:

— Իսկ որտեղ ես դու այն գնել:

— Հրուշակավաճառի խանութում:

— Ո՞ր խանութում:

— Հասագերի:

Մի պահ լուրջուն տիրեց: Ես իմ սառչող ձեռքբրում շարունակում էի պահել խնայատուփը: Իմ մեջ ամեն բան սառած էր ու ցուրտ:

Այդժամ նա սպառնագին շեշտով հարցրեց: — Դո ձիշտ է:

Եւ նորից անհապաղ վրա թերեցի՝ այս, իհարկե, ճիշտ է, խանութում ես ընկերոջ՝ Վերերի հետ էի, ես նրան միայն ուղեկցում էի: Դրամը գլխավորապես նրանը՝ Վերերինն էր, իմ բաժինը այնտեղ շատ չնշին էր:

— Գլխարկդ վերցրու, — ասաց հայրու, — մենք հիմա միասին կգնանք հրուշակավաճառ Հասագերի մոտ: Նա հո կիման՝ ձիշտ ես ասում, թե ոչ:

Փորձեցի ծափալ: Ցուրտն այժմ սողոսկեց սրտիս ու ստամոքսիս մեջ: Առաջինը դուրս եկա սենյակից և միջանցքում գլխիս դրեցի կապուտ գլխարկս: Հայրու բաց արեց ապակե դուռը, նա էլ իր գլխարկը դրեց:

— Մի րոպե..., — ասացի ես, — ես մի րոպեցի կիբրադառնամ:

Լա գլխով համաձայնության նշան արեց: Ես մոտա զուգարան, դուռը ներսից փակեցի ու մնացի մենակ, հիմա առժամանակ ինձ ապահով էի գգում: Այս, երանի թե հենց հիմա մասն վրա հասներ...

Ես այնտեղ փակված մնացի մեկ րոպե, երկու րոպե: Անօգուտ: Մահս չէր գալիս: Հարկավոր էր պինդ մնալ: Դուրս գալով՝ իմ ետևից փակեցի դուռը, և մենք աստիճաններով ցած իջանք:

Երբ դռնից դուրս էինք գալիս՝ գլխում մի հրաշալի միտք ծագեց, և ես շտապեցի ասել: — Բայց այսօր կիրակի է, Հասագերի խանութը փակ է:

Իմ այդ հուսավառությունը միայն մի երկու վայրկյան տևեց: Հայրու շտապեց ինձ հանգստանել: — Այդ դեպքում նրա տուն կգնանք: Դե, գնացինք:

Մենք ճամփա ընկանք: Ես ուղղեցի գլխարկս, ձեռքս գրպանս խրեցի և փորձում էի այնպես քայլել նրա կողքով, ասես առանձնապես ոչինչ էլ չէր պատահել: Ես շատ լավ գիտեի, որ յուրաքանչյուր անցորդ հենց միայն իմ տեսքից իսկույն կիասկանար, որ ինձ ուժով են տանում, բայց ամեն դեպքում փորձում էի բազմաթիվ խորամանկություններով թաքցնել այդ բանը: Ես ձգտում էի ազատ ու անկաշկան շնչել, ասես ոչինչ էլ չէր եղել: Չէի ուզում մատնել, թե ինչպես էր կուրծք ծնչվում: Ձգտում էի դեմքիս անմեղ արտահայտություն տալ, անբռնազբոսություն ու ինքնավստահություն խաղալ: Ճանապարհին վեր քաշեցի գուլպաս, չնայած դրա կարիք չկար, և ճպտացի, թեև գիտեի, որ այդ ժպիտը սարսափելիորեն անմիտ ու անբռնական տեսք պիտի ունենար: Իմ ներսում՝ կոկորդում ու կրծքիս տակ նստել էր դև և խեղդում էր ինձ:

Մենք անցանք հյուրանոցի մոտով, պայտագործի ու կառապանի տների մոտով, երկաթուղագի կամրջի առջևում: Այստեղ, դիմացը, երեկ երեկոյան, ես ծեծկուտվել էի Վերերի հետ: Միթե դեռ չէր հանգստացել աչքիս տակի թերձվածքի ցավը: Աստված իմ: Աստված իմ...

Ես ակամա առաջ էի գնում ջղագորեն ջանալով ինձ ուղիի պահել: Անցանք Արծիվ ամբարտակի մոտով և դուրս եկանք կայարանային փողոց: Դեռ երեկ ինչ բարի, ինչ բարեհոգի էր այդ փողոցը... Զմտածել... Առաջ... Առաջ...

Մենք արդեն մոտենում էինք Հասագերի տանը: Այս վերջին րոպեներին երկի թե մի հազար անգամ աչքիս առաջ պատկերացրել էի այն տեսարանը, որն ինձ ապասում էր այնտեղ: Ահա և հասանք: Հիմա այդ ամենը կկատարվի:

Բայց անհնար էր այդ բոլորին դիմանալ: Ու ես կանգ առա:

— Ինչ եղավ թեզ: Ինչ է պատահել, — հարցրեց հայրս:

— Ես ներս չեմ մտնի, — ցածրաձայն ասացի:

Նա վերևից ինձ էր նայում: Զե որ սկզբից եթք նա ամեն բան գիտեր: Ել ինչ էի նրա առաջ ձևեր թափում, ել ինչո՞ւ էի այդբան ջանք ու եռանդ գործադրություն: Զե որ արածս անմտություն էր:

— Ինչ է, չինի՞ թե թգերը Հասագերի մոտից չես գնել, — հարցրեց նա: Ես գլուխս տարութերեցի:

— Ահա թե ինչ, — արտաքնապես հանգիստ տոնով ասաց նա: — Այդ դեպքում կարելի է և տուն վերադառնալ:

Նա իրեն վայելուց էր պահում, փողոցում, մարդկանց մեջ հավանաբար ինձ խնայում էր: Մեր ճանապարհին շատ մարդիկ էին հանդիպում, ամեն րոպե հայրս սրա-նրա ողջույնին էր պատասխանում: Այ թեզ դերասանություն: Այ թեզ հիմար ու անհեթեթ տանջանք: Ես չէի կարող նրան շնորհակալ լինել իր այդ ինքնազնպահության ու ինձ խնայելու համար:

Այդ, նա ամեն ինչ գիտեր... Գիտեր և ինձ թույլ տվեց որ թօչկոտեմ, դատարկ տեղը կամակոր ինքնախաբեռության վարժություններ կատարեմ, ինչպես որ մետաղալարե թակարդն ընկած մկնիկին ես թույլ տալիս, որ

Նա պար գա, մինչ ջրախեղդ կանես: Այս, ավելի լավ կլիներ, որ նա միանգամից, սկզբից ևեթ, առանց այլսայլ հարցափորձության, փայտով գլուխս կոտրեր, դա ինձ համար, ճիշտն ասած, ավելի ցանկալի կլիներ, քան այն արտաքին հանգստությունը և արդարամտության այն խաղը, որոնց միջոցով սողոսկեց իմ հիմար ստախոսության մեջ և դանդաղ կերպով խեղդում էր ինձ: Անկեղծ ասած, երի թե ավելի լավ կլիներ մի բիրտ ու կոպիտ հայր ունենայի, քան այսպիսի բարեկիրթ ու արդարամիտ մեկը: Երբ ընտանիքի հայրը, ինչպես այդ քանը նկարագրվում է պատմություններում ու գրքուներում, չարացած կամ հարբած լինելով՝ անխընա ծեծում էր իր երեխաներին, նշանակում է նա իրավացի չեր, և ծեծվելուց հետո մարմնիդ վրա ցավ զգալով էլ՝ դու ներքուստ, ամեն դեպքում, կարող ես ուսերդ թոթել և արհամարհելով ատել նրան: Հայրս իրեն երբեք նման քան թույլ չեր տալիս, նա չափից դուրս բարեկիրթ էր ու անբասիր, նա երբեք անարդար չեր լինում: Նրա առաջ դու միշտ էլ փոքրիկ ու թշվառական մի եակ էիր:

Առամներս սեղմած՝ ես նրանից առաջ տուն մտա և ուղղվեցի դեպի իմ խուզը: Նա դեռ շարունակում էր իրեն հանգիստ ու սառնարյուն պահել, ավելի ճիշտ նա միայն այդպիսի կեցվածք էր ընդունել, քանի որ, իրականում, ինչպես ես պարզորոշ զգում էի, նա շատ չարացած էր: Եվ ահա նա սկսեց խոսել իր սովորական ոճով.

— Ես միայն ուզում եմ հասկանալ, թե ինչ իմաստ ուներ այս ողջ կատակերգությունը: Շեն կարող ինձ բացարել: Ես հենց սկզբից էլ գլխի ընկա, որ քո այս ողջ գեղեցիկ պատմությունը մի իսկական կեղծիք էր: Էլ ինչո՞ւ էիր խեղկատակություններ անում... Դու հո իսկապես ինձ հիմարի տեղ չես դոել, և կարծում ես, թե ես ասածներիդ կիավատանմ...

Առամներս ամուր սեղմած՝ թուքս կուլ տվի: Դե, գոնե վերջ տար դրան: Կարծես գիտեի, թե ինչո՞ւ էի հորինել այդ ողջ պատմությունը... Կարծես հասկանում էի, թե ինչո՞ւ էի թաքցնում կատարած հանցագործությունը և մեղա չեի գալիս... Նրան թվում էր, թե ես հասկանում էի, թե ինչո՞ւ գողացա այդ հիմար թզերը... Միթե ես այդ քանը ցանկանում էի անել, միթե արել եմ մտածված, դիտավորյալ և ինչ-ինչ նպատակներով... Միթե ես չեի զղացել և, արդյոք, դրա պատճառով չե, որ այսքան տառապանք եր եմ կրում, շատ ավելի ծանր, քան ինքն է կարծում:

Նա սպասողական դիրք էր բնել, նյարդայնացած դեմքին դրոշմված էր տանջալի համբերության կնիքը: Այդ պահին ինձ համար դրությունը կատարելապես պարզվեց, բայց այն ժամանակ ես ի վիճակի չեի, ինչպես այսօր, այդ ամենը բառերով արտահայտել: Իրականում ահա թե ինչ էր տեղի ունեցել, ես գողություն էի կատարել, և զղման ու միխթարության ակնկալիքով բարձրացա հորս սենյակը և այն, ի հուսախաբություն ինձ, դատարկ գտա: Ես չեի ուզում գողություն անել: Ես միայն ցանկանում էի, քանի որ հայրս տեղում չեր, միայն հետախուզել, նրա իրերը տնտղել, գաղտնիքներին առնչվել, ինչ-որ մի նոր քան իմանալ նրա մասին: Ահա

թե իրականում բանն ինչպես էր: Հետո թզերը աչքովս ընկան, ու ես գողաց: Եվ նոյն պահին էլ խստովանեցի ու զղացից իմ հանցանքի համար, և ողջ երեկով օրը տառապեցի ու տարակուսանքների գիրկն ընկա, նույսիսկ մեռնելու ցանկություն ունեցա, դատապարտեցի արարս, համակվեցի նոր, ազնիվ մղումներով: Իսկ այսօր, այո, այսօր ամեն ինչ ուրիշ էր: Այդ զղումը և ողջ մնացյալը ես արդեն հիմնովին ճաշակել էիս. այժմ ավելի քան սթափ էի, իմ մեջ մի անբացատրելի, բայց և հուժկու դիմադրություն էի զգում հորս և այն ամենի նկատմամբ, ինչը նա սպասում էր ինձանից ու տենչում էր ամեն գնով ինձանից դրու կորզել:

Եթե միայն կարողանայի ամեն ինչ այսպես բացարել նրան՝ նա ինձ կիականար: Սակայն երեխաները, որքան էլ որ նրանք խելամտությամբ գերազանցում են մեծահասակներին, ճակատագիր խնդրում միայնակ են ու անզոր:

Համառությունից ու անթեղված ցավից քար կտրած՝ ես շարունակում էի լոել, չընդհատեցի նրա խելացի ճառերն ու խրատները, ցավով ու տարօրինակ շարախնդությամբ տեսմելով, թե ինչպես է ամեն ինչ փուլ գալիս, գլորվում դեպի ավելի վատթարը, ինչպես է նա տառապում և հիասքափության մեջ անգամ ապարդյուն կերպով փորձում կյանքի կոչել իմ մեջ եղած լավագույն հատկանիշները:

Ու երբ նա հարցեց. «Ուրեմն, դու գողացնել ես այդ թզերը», ես միայն կարողաց գլխով հավանության նշան անել: Եվ ահա, այն ժամանակ, երբ նա փորձում էր իմանալ, թե գոնե զղոնմ էի պատահածի համար, թե ոչ, գլխով հաստատական նշան անելուց բացի ուրիշ ոչ մի պատահածն չգտա: Ինչպես կարող էր նա, այդ մեծահասակ կոչվածը, խելացի համարվող այդ մարդը նման անհեթեր հարցեր տալ... Դե, ինչպես կարող էր եղելությունը ինձ ցավ չպատճառել, ինչպես կարող էի զգութա... Միթե չեր տեսնում, թե ինչպես էի այդ ամենից տառապում, ինչպես էր այն ճնշում սիրտս... Միթե ես դեռ կարող էի գոհանալ իմ արարքից, երբ այդ թշվառական թզերի հետ կապված պատմության պատճառով...

Իմ մանկական կյանքում թերևս առաջին անգամ զգացի, հիմնովին հասկացա ու գիտակցեցի, թե ինչպես երկու հարազատներ, ըստ եռթյան իրար նկատմամբ փոխադարձաբար բարյացակամ տրամադրված երկու անձնափորւթյուններ կարող էին իրար չհասկանալ, չարչարել, կեղեցել իրարու, և թե ինչպես այդ պարագային աննրանկատորեն արտաբերված ցանկացած ճառ ու խրատաբանություն, ցանկացած խելամիտ փաստարկում ու բարի խորհուրդ կարող են միայն թույն սրսկել նրանց փոխարքերություններին, դուրս դառնալ նորանոր տառապանքների, խոճի խայթոցների ու նորահանար մոլորությունների: Ինչո՞ւ էր այդպես լինում: Ինչ արած, երկի թե այդպես էր նախասահմանված: Դա անհեթեր էր, անմիտ, ծիծաղաշար ու հուսահատեցնող, բայց իրականությունն այդ էր, ինչ կարող ես անել:

Այս պատմության մասին այսքանն էլ բավական է... Այն, ավարտվեց նրանով, որ կիրակի օրվա ողջ երկրորդ կեսը ինձ բանտարկեցին ձեղնահարկում: Այդ խստագույն պատիժը կորցրեց իր դաժանության ինչ-ինչ երանգները շնորհիվ այն հանգամանքների, որոնք, սակայն, միայն ինձ էին հայտնի: Խավար ու բարձիթողի արված ձեղնահարկում փոշեպատ մի արկդ էր տեղադրված՝ կիսով չափ լիք հին գրքերով, որոնց մի մասը բոլորովին էլ երեխաների ընթերցանության համար չէր նախատեսված: Տանիքը ծածկող կղմինդրներից մի քանիսը այսուայնկողմ տեղաշարժելով՝ ես ապահովեցի կարդալու համար անհրաժեշտ լուսավորությունը:

Կիրակնօրյա այդ տիսուր երեկոյան, քնելուց առաջ, հայրս հաջողացրեց ինձ հետ մի կարճատև խոսակցություն ունենալ, որից հետո մենք վերջնականապես հաշտվեցինք: Անկողնում պառկած՝ ինձ շարունակ թվում էր, որ նա առավել լիակատար կերպով ու ամբողջությամբ էր ինձ ներել, քան ես իրեն: